

ՊԱՏԵՐԱԶՄԻ ԿՆԵՒՈՆ

Յաճախ կը լսենք. «պատերազմ չկրնար ծագիլ, ազգերը յոգնած են. ոչ ոք կուզէ պատերազմիլ»: Յոգնածներու ենթակայական տրամադրութիւնն է սա, կիսատ ըմբռնում մը պատմութեան մասին:

Պատմութիւնը խաղաղութեան եւ պատերազմի միջեւ ճօճացող առաջընթաց մըն է: Պատերազմի եւ խաղաղութեան յաւիտենական տենչ - այս է մարդու ճակատագիրը: Չկայ պատերազմ՝ չկրնար խաղաղութեան տենչ ըլլալ, չկայ խաղաղութիւն՝ չկրնար պատերազմ գոյութիւն ունենալ: Պատերազմի ծնուցիչ մայրը խաղաղութիւնն է, խաղաղութեանը՝ պատերազմը: Խաղաղութեան ատեն է, որ պատմութիւնը կը հասունցնէ պատերազմի խռովքը եւ պատերազմի ընթացքին է, որ կեանքը կը յղանայ խաղաղութեան բաղձանքով:

Ազգերը կը մեռնին ո՛չ թէ պատերազմէն, այլ խաղաղութեան մասին իրենց ունեցած ծուռ ըմբռնումէն: Նման ըմբռնումն է, օրինակ, այն պնդումը, թէ «ոչ ոք կուզէ պատերազմիլ»: Պատմութենէն գիտենք, որ ազգերը պատերազմի կը մտնեն ո՛չ միայն «կամայ», այլ «ակամայ»: Ըսել է թէ պատերազմը հասունցնող առաջընթացներու մարզին մէջ տեղ ունին ե՛ւ անբանական, անգիտակցական ոյժերը: Յայտնի է նաեւ, որ պատերազմներու վախճանը յաճախ կորոշեն մարդոց կամքին եւ ցանկութիւններուն հակասող գործօնները, որով՝ յաղթութեան եւ պարտութեան խնդրին մէջ ալ վճռական դեր մը վերապահուած է անբանականին, անգիտակցականին:

Հայը մարդկային այն տիպերէն է, որոնք կը հպարտանան իրենց իմացական ընդունակութեամբ, որոնք սակայն կենսաբանական իմաստութիւն չունին: Հայը գործնական խելքի էակ է եւ ո՛չ թէ լայնաթոզ երեւակայութեան. ան հասկցող մըն է եւ ոչ թէ կռահող մը: Կարելի է ըսել, որ հայը խաղաղութեան ատեն աշխարհի ամենամանկոյթ ժողովուրդն է: Հայը չի հաւատար պատերազմի եւ ատոր համար պատմական ամեն դէպք ան կընդունէ իբր անակնկալ մը, իբր «ամամպ երկինքէն ժայթքող կայծակ» մը: Ան տակաւին հասկցած չէ կենսա-բարոյական սա երկու ճշմարտութիւններու իմաստը - *խաղաղութեան մէջ նախապատրաստուիլ միայն մէկ բանի՝ պատերազմի, իսկ պատերազմի ընթացքին կամենալ միայն մէկ բան՝ յաղթանակ:*

«Ցեղ եւ Հայրենիք», Սոֆիա, 1936թ.

ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ Գազիկ Տեր-Յարությունյան

Ընթացող համակարգային փոփոխությունների հետեւանքով որոշ հասկացությունների (գլոբալացում, դեկավարվող քառս եւ այլն) վերանայմանը զուգընթաց անհրաժեշտություն է ծագում մասամբ վերիմաստավորել նաեւ ազգային անվտանգության (ԱԱ) եւ գաղափարախոսության միջեւ եղած առնչություններն ու պատկերացումները: Այդ համատեքստում առանձին ուշադրության է արժանի ԱԱ ամենադինամիկ եւ արագ փոփոխվող բաղադրիչներից մեկը՝ տեղեկատվականը, որն արդի փուլում հանդես է գալիս որպէս ազգային գաղափարախոսության կրողի եւ հանրությունում վերջինիս հիմնադրույթները սերմանողի դերում:

Գաղափարախոսությունը՝ որպէս ազգային անվտանգության բովանդակություն

ԱԱ հասկացությունն այսօր ներառել է մարդկային կենսագործունեության գրեթե բոլոր ոլորտները՝ ռազմաքաղաքական, սոցիալ-տնտեսական, տեղեկատվական, հոգեւոր-հոգեբանական եւ այլն, որոնք, իրենց հերթին, սերտորեն առնչվում են միմյանց հետ: Արդյունքում՝ այդ ոլորտների միջեւ սահմանները սկսել են պայմանական բնույթ կրել: Զարգացման նման միտումը, ըստ մեզ, ոչ միայն անմիջական շփման եզրեր է ստեղծում ԱԱ եւ գաղափարախոսություն հասկացությունների միջեւ, այլեւ ուղղակիորեն միավորում է դրանք: Բնորոշ է, որ որոշ հեղինակներ գաղափարախոսությունը սահմանում են որպէս ընդհանրական գործընթացների ամենարդյունավետ ռեժիմ եւ փոխկապակցվածությունն ապահովող հրահանգների մի համալիր: Նման սահմանումը կիրառելի է նաեւ ԱԱ-ի նկատմամբ, եւ կարելի է ամրագրել, որ արդի իրողություններում գաղափարախոսությունը հանդիսանում է ԱԱ տեսական բովանդակությունը: Այս առիթով նշենք, որ սկսած Անտուան Դեստյուտ դը Տրասսիից, որը 19-րդ դարի սկզբին եվրոպական ավանդույթում շրջանառության մեջ դրեց «գաղափարախոսություն» եզրը, այդ հասկացությանը տրվել են բազմաթիվ եւ, ըստ մեզ, հաճախ միմյանց փոխլրացնող սահմանումներ: Նման իրադրությունը բարդ հասկացությունների պարա-

գայում բնականոն է, եւ այս համառոտ ակնարկում մենք նույնպէս, կախված շարադրանքի ենթատեքստից, համապատասխանաբար կօգտագործենք այս կամ այն հասկացության տարբեր սահմանումները:

Միեւնոյն ժամանակ, գաղափարախոսություն հասկացությունը նույնպէս որոշակի էվոլյուցիա է ապրել եւ կորցրել է նախկինի (օրինակ՝ կոմունիստական, նացիոնալ-սոցիալիստական կամ վուլգար-ազատական) իր միանշանակ, առարկում չընդունող միտումը: Այս առումով հատկանշական է, որ ընթացող ճգնաժամի թելադրանքով ավանդաբար ազատական համարվող երկրներում ընթանում է սոցիալիստական գաղափարների լեգիտիմացում եւ զարգացում: Արդյունքում՝ ձեւավորվում են «բազմագաղափարախոսական» հանրություններ, որտեղ որոշակի բաժնենասերով գործում են ինչպէս ունիվերսալ՝ սոցիալիստական եւ լիբերալ, այնպէս էլ ազգային-քաղաքակրթական պատկերացումներ արտահայտող գաղափարական հայացքները:

Համեմատական դիտարկումներից հետեւում է, որ ԱՄ համակարգի արդյունավետության գլխավոր չափորոշիչներից մեկը՝ պետությունների մրցունակությունը, էապէս պայմանավորված է տվյալ հանրության կողմից բազմագաղափարախոսական կամ, այլ խոսքերով՝ ընդհանրական-սինթետիկ դաշտ ձեւավորելու ունակությամբ: Այդ համատեքստում մրցունակ պետության օրինակ կարող է հանդիսանալ Չինաստանը, որը նախորդ դարի վերջից կիրառում է սոցիալիստական, ազատական եւ ազգային-պահպանողական հիմնադրույթների համալիրը: Անգլիախոս հանրությունները, որոնց համար ազատականությունը եւ ավանդապատությունը (տրադիցիոնալիզմ) գերակայող ազգային բնութագիր են, ներկայումս սկսել են տեղ տալ սոցիալիստական դրույթներին, դրանով իսկ բարձրացնելով իրենց մրցունակությունը: Ռուսաստանում ազգայնական-պահպանողական եւ ազատական գաղափարներ կրողների հետ միասին հանրության մի զգալի հատվածի հոգեկերտվածքին հարազատ են նաեւ սոցիալիստական պատկերացումները, եւ եթէ ՌԴ-ում հաջողվի համատեղել այդ տարբեր գաղափարախոսական հոսանքները (ինչը, չնայած որոշ դրական միտումներին, առայժմ չի կատարվել), ապա դա էապէս կբարձրացնի Ռուսաստանի մրցունակությունը:

Այսպիսով, արդի փուլում հանրությունների եւ պետությունների ընդհանրական գաղափարախոսությունը, մրցունակության համատեքստում, պետք է իր մեջ համատեղի տարաբնույթ գաղափարախոսական հիմնադրույթներ: Նման մոտեցում պետք է ցուցաբերվի նաեւ ԱՄ հիմնադրույթներ ձեւավորելիս:

Տնտեսական անվտանգության առանձնահատկություններն արդի փուլում

Նկատենք, որ վերոնշյալ ընդհանրական գաղափարախոսությունում ազգային-պահպանողական կոնցեպտները պակաս «նյութականացված» են և դրանց դերակատարումը տնտեսական ոլորտում կարծես թե սահմանափակ բնույթ է կրում: Միեւնույն ժամանակ, այդ կոնցեպտները պայմանավորում են տնտեսվարման որոշ առանձնահատկություններ և ընդհանուր առմամբ միտված են դեպի ինքնաբավությունը: Ներկայիս ճգնաժամի պայմաններում այդ միտումը հանգեցնում է պրոտեկցիոնիստական (հովանավորչական) բնույթի տնտեսական քաղաքականության: Բավական է նշել, որ վերջին մեկ տարում 20 առաջատար և նախկինում «բաց դռների» քաղաքականություն քարոզող երկրներից 17-ում ընդունվել են ավելի քան 47 պրոտեկցիոնիստական որոշումներ:

Ըստ մեզ, այդ երեւույթը պայմանավորված չէ միայն ճգնաժամային իրավիճակից դուրս գալու տնտեսական-մարտավարական նկատառումներով, այլ արտահայտում է որոշակի երկարաժամկետ ռազմավարություն, որն աղեկվատ է ձեւավորվող բազմաբեւեռ աշխարհակարգի տրամաբանությանը: Նոր իրողությունում վերացել է արեւմտյան նախկին մենատիրությունը, և սրվել է առեւտրաֆինանսական մրցակցությունը: Որպես հետեւանք՝ տնտեսական էքսպանսիան ընդունել է տարավեկտոր բնույթ, և ներկայումս տնտեսապես առաջատար երկրները ստիպված են պաշտպանվել նախկինում «հետամնաց» համարվող երկրների տնտեսական հավակնություններից: Այսպիսով, արդի տնտեսական գործընթացները, հենվելով ունիվերսալ գաղափարախոսությունների հիմնադրույթների վրա, զուրկ չեն նաեւ որոշակի ազգային-պահպանողական գաղափարախոսական տրամաբանությունից:

Նկատենք նաեւ, որ պրոտեկցիոնիզմն արտահայտում է ոչ միայն ինքնաբավության միտումը, այլև որոշակի տնտեսական հենք է ստեղծում տարավեկտոր գլոբալացման մաս կազմող այլ, օրինակ՝ տեղեկատվական բնույթի, անցանկալի գործընթացներին դիմակայելու համար:

Տեղեկատվական անվտանգության և ազգային-պահպանողական գաղափարախոսության միասնականությունը

Ըստ դասական ձեւակերպման, մտավոր-հոգեւոր գործընթացների և պատկերացումների ոլորտն ընդգրկող ազգային-պահպանողական գաղափարախոսությունն այն գաղափարների, տեսակետների ու ազգային

արժեքների համակարգն է, որում գիտակցվում, գնահատվում է մարդկանց վերաբերմունքը միմյանց նկատմամբ եւ դեպի իրականությունը: Իր հերթին, գաղափարախոսությունն իրական գործոն կարելի է համարել միայն այն պարագայում, երբ այն վերածվում է հանրային գիտակցության բաղադրամասի: Մինչդեռ, դա հնարավոր է իրագործել միայն տեղեկատվական տեխնոլոգիաների (լայն մեկնաբանելով այս եզրը եւ դրա տակ չհասկանալով միայն պարզունակ քարոզչություն) միջոցներով: Այսինքն՝ ազգային գաղափարախոսությունը, վերջինիս անհրաժեշտության գիտակցման դեպքում, պետք է հանդիսանա տեղեկատվական դաշտի առաջնային եւ հիմնական բաղադրամասը: Այստեղից հետեւում է, որ տեղեկատվական-հոգեբանական (ոչ տեխնիկական) անվտանգության հիմնական խնդիրներն են.

- ❖ ազգային-պահպանողական գաղափարախոսության ներդրումը ներքին տեղեկատվական դաշտում,
- ❖ վերոնշյալ գաղափարախոսական կոնցեպտների բովանդակության պաշտպանությունը արտաքին եւ ներքին խեղաթյուրումներից,
- ❖ ազգային շահերի համատեքստում՝ ազգային գաղափարախոսական կոնցեպտների տարածումն արտաքին տեղեկատվական դաշտում:

Այսպիսով, եթե հանրության ընդհանրական գաղափարախոսությունը եւ ԱԱ ընդհանրական կոնցեպտները համընկնում են, ապա գաղափարախոսության ազգային-պահպանողական բաղադրիչն, իր հերթին, անմիջականորեն կապակցված է տեղեկատվական անվտանգության (SU) ոլորտի հետ: Դա թույլ է տալիս այս պարագայում պնդել, որ SU բովանդակային (ոչ տեխնիկական) հատվածի եւ ազգային-պահպանողական գաղափարախոսության գործառույթները համընկնում են, իսկ այդ հասկացությունները, միասնաբար, նույնպես կարելի է սահմանել որպես հրահանգների մի համալիր, որն ապահովում է տեղեկատվական գործընթացների (այս եզրի լայն մեկնաբանության պարագայում) ամենաարդյունավետ ռեժիմը եւ փոխկապակցվածությունը:

SU բովանդակային հատվածում կրիտիկական ենթակառուցվածքների առկայությունը

Որոշ առաջատար պետություններում (հատկապես՝ Միացյալ Նահանգներում) SU առաջնահերթ խնդիր է համարվում, այսպես կոչված, կրիտիկական ենթակառուցվածքների՝ կառավարման, կոմունիկացիոն-տեղեկատվական, էներգա- եւ ջրամատակարարման, ոստիկանական-

փրկարարական, ֆինանսական եւ այլ համակարգերի, տեղեկատվական անվտանգության ապահովումը: Արդարացիորեն համարվում է, որ այդ համակարգերի անվտանգության պահպանումը ԱԱ տեսանկյունից հանդիսանում է տեխնիկական առաջնային խնդիր: Կարծում ենք, որ նման «կրիտիկական ենթակառուցվածքները» բնորոշ են եւ կարելուր նաեւ ՏԱ բովանդակային, այսինքն՝ գաղափարախոսության ազգային-պահպանողական հատվածի համար. պատահական չէ, որ ամերիկյան փորձագետները ԱԱ հիմնական խնդիրը նույնացնում են ազգային արժեքների պաշտպանության խնդրի հետ: Գործնական հարթությունում դա նշանակում է, որ ազգային արժեքային համակարգում պետք է ընտրվեն եւ հատուկ ուշադրության ու պաշտպանության առարկա դարձվեն այն թեզերը, որոնց խեղաթյուրումը կարող է հանգեցնել ազգային բարոյալքման եւ կազմալուծման:

Այս ամենից հետեւում է, որ լիարժեք ՏԱ համակարգի ձեւավորումն անհնարին է առանց համապատասխան գաղափարական հիմնադրույթների առկայության: Սակայն դա չի նշանակում, որ ՏԱ համակարգի ձեւավորումը պետք է իրագործվի այդ հիմնադրույթների հստակեցումից հետո միայն: Ինչպես նշել ենք վերը, տեղեկատվական անվտանգությունը, ըստ էության, նույնացվում է ազգային-պահպանողական գաղափարախոսության հետ, եւ ՏԱ ոլորտում հայեցակարգային առանձին մշակումներն, անշուշտ, կնպաստեն գաղափարախոսական համալիր մոտեցումների ստեղծմանը:

ԱԽԱԼՔԱԼԱՔԻ ԵՎ ՆԻՆՈԾՄԻՆԴԱՅԻ ՀԱՅ ԿԱԹՈՒԼԻԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Արեստակես Սիմավորյան

Ախալքալաքի եւ Նինոծմինդայի հայ կաթոլիկ համայնքների ներկայիս շերտն այստեղ հաստատվել է 19-րդ դ. քսան-երեսունական թվականներին՝ գաղթելով Արեւմտյան Հայաստանի տարբեր շրջաններից՝ Կարինից, Մուշից, Արդահանից եւ այլ հայաշատ վայրերից: Նոր կազմավորված համայնքները բավականին հաջող դիմագրավեցին հարուցված բազմաթիվ դժվարություններին՝ տեղի չտալով ո՛չ մահմեդականների, ո՛չ էլ վրաց ուղղափառների կրոնափոխ լինելու կոչերին: Այս գործընթացները դադարեցին Վրաստանի խորհրդայնացման սկզբին՝ կաթոլիկ հայերի համար բերելով նոր փորձություններ, որոնք պահպանվեցին երկար ժամանակ:

Այդ փորձություններից ամենահիմնականը Վրաստանում, ինչպես եւ Հայաստանում խորհրդային կարգերի հաստատումն էր, որն առաջին իսկ տասնամյակներում ուղեկցվեց հոգեւորականության նկատմամբ բռնարարքներով, աքսորով, ֆիզիկական ոչնչացումով, եկեղեցիների գույքի բռնագրավումով, ինչը թուլացրեց նաեւ այս շրջանների հայ կաթոլիկ հոգեւոր իշխանության դիրքերը: Խորհրդային Միության փլուզումը լայն հնարավորություններ ընձեռեց Հռոմի հոգեւոր ղեկավարներին՝ միանձնյա որոշել երկու երկրների հայ կաթոլիկ համայնքներին մեկ թեմում ընդգրկելու հարցը:

Վրաստանում կաթոլիկ (ոչ միայն հայ, այլեւ վրացի, ասորի-խալդ կաթոլիկները ներառյալ) եկեղեցուն իրավական կարգավիճակ տալու շուրջ վրացական կողմի հետ բանակցությունները հենց սկզբից մտան փակուղի: Այս խնդիրը Վատիկանի համար սկզբունքային է եւ շարունակում է մնալ որպես չլուծված հիմնահարցերից մեկը: Հարավային Կովկասում կրոնական հարցերով Վատիկանի դեսպան Գուժերոտին նշում է. «Հարցի սրացումը կապված է հատկապես հայերի հետ: Վրացիների համար խնդիրը չորս-հինգ եկեղեցիներին կարգավիճակ տալը չէ, այն ընդգծված էթնիկ բնույթ ունի»: Վերոհիշյալ խնդիրներից ելնելով՝ Վրաստանում կաթոլիկական հոգեւոր գործունեություն ծավալելը Վատիկանի համար իրավական տեսանկյունից խիստ սահմանափակ դարձավ:

Այդուհանդերձ, Վրաստանի հայ կաթոլիկները փաստացի մտան նորաստեղծ Արեւելաեվրոպական թեմի մեջ, որը հիմնադրվեց 1991թ.՝

Գյուճարի կենտրոնով: Քաղաքի ընտրությունը պատահական չէր, քանի որ հայ կաթոլիկների մեծ մասը բնակվում է Հայաստանի հյուսիսային շրջաններում: Դա որոշ չափով հարթակ դարձավ սահմանից այն կողմ հայ նույնադավանների հետ հարաբերություններ հաստատելու գործում: Այսօր Սամցխե-Ջավախքում հայ կաթոլիկ համայնքները համախումբ բնակվում են Ախալցխայում եւ նրա շրջակա գյուղերում, ինչպես նաեւ Ախալքալաքի, Նինոծմինդայի շրջաններում: Վերջին երկու շրջանների համայնքները, որոնք հիմնականում գյուղական են, իրարից բավականին անջատ տարածքներում են գտնվում, սակայն ամենակարեւորն այն է, որ միմյանց կապող օղակը կաթոլիկ լինելու ընդհանուր պատմական հիշողությունն է:

Լայն իմաստով՝ վերոհիշյալ շրջանների հայ կաթոլիկների այսօրվա խնդիրներն առանձնապես չեն տարբերվում հայ առաքելականների խնդիրներից եւ տեղավորվում են Սամցխե-Ջավախքի հիմնահարցերի շրջանակներում:

Նինոծմինդայի եւ Ախալքալաքի հայ կաթոլիկները

Ժողովրդախոսակցական լեզվում այս շրջաններում բնակվող հայ կաթոլիկներին սովորաբար անվանում են «Ֆրանգ», «Ֆրենգ»: Ոմանք «Ֆրանգ» բառի ստուգաբանությունը կապում են Կիլիկյան Հայաստանում Ֆրանցիսկյան միաբանության քարոզիչների անվան հետ: Անվանումն ի սկզբանե կրել է խաչակիր, եվրոպացի, օտարական իմաստը: Հետագայում եվրոպացի բառն ասոցիացվել է կաթոլիկ լինելու հետ, եւ քանի որ Հայոց մեջ կաթոլիկության տարածումն առավելապես կապված էր եվրոպական քարոզիչների ծավալած գործունեության հետ, «Ֆրանգ»-ը ձեռք է բերել երկիմաստություն՝ միաժամանակ ցույց տալով եւ կրոնական, եւ էթնիկ (ֆրանսիացի, իտալացի) պատկանելություն:

Ջավախքի հայ կաթոլիկներին, շրջակա միջավայրում նրանց տրված տիպական անվանումներից ելնելով, պայմանականորեն կարելի է բաժանել հետեւյալ խմբերի. ա) «մշեցի-ֆրանգներ», բ) «գրո-ֆրանգներ», գ) «խաս-ֆրանգներ»:

ա. «Մշեցի-ֆրանգներ»-ը ներկայումս առավելապես ապրում են Նինոծմինդայի շրջանի գյուղական համայնքներում՝ Հեշտիայում, Ուջմանայում, Թորիայում եւ Ժղանովականում: Ավելորդ չէ նշել, որ վերջինս հիմնադրվել է 1930-32թթ., որի բնակիչները տեղափոխվել են Հեշտիայից: Խորհրդային Վրաստանի անկախացումից հետո Հեշտիան դառնում է Նինոծմինդայի շրջանի կաթոլիկ հայերի հոգեւոր կենտրոնը:

Յեշտիայի գյուղական հասարակությունը ամենակազմակերպված հայ կաթուղիկ համայնքներից է: Այդ հարցում զգալի է մայրապետների գործունեությունը, որոնց ջանքերի եւ ամերիկյան բարերարների շնորհիվ տեղում բացվել եւ գործում է «Կարդինալ Աղաջանյան» պատանեկան ճամբարը:

Հայ Կաթուղիկ եկեղեցու վերագործունեությունն այս կողմերում սկսվեց 1992 թվականից, երբ առաջին անգամ Յեշտիայում հաստատվեցին Անարատ Յղութեան միաբանության քույրերը: Մինչ այդ եկեղեցին փակ էր եւ ծառայում էր կոլտնտեսությանը՝ որպես պահեստ:

Այդ տարիներին էր, որ վրաց ուղղափառ եկեղեցին նախապատրաստվում էր հայ կաթուղիկներին այսպես կոչված դարձի բերելու իր քաղաքականությանը՝ պատճառաբանելով, որ նրանք նախկին «վրացի կաթուղիկներ» են, որոնք տարբեր գործունեների արդյունքում հայացել են: Այդ պատրվակով 1995թ. Յեշտիա անակնկալ այցելել է Վրաց եկեղեցու առաջնորդ Իլյա Երկրորդը: Վերջինիս նպատակը տեղի հայ կաթուղիկ եկեղեցում վրացական արարողակարգով ծիսակատարություն անցկացնելն էր, սակայն հանդիպելով բնակիչների համառ դիմադրությանը՝ հեռացել է գյուղից: Այս դեպքը մեկ անգամ եւս փաստում է, որ վրացական հոգեորսության քաղաքականությունը շարունակական բնույթ է կրել, որն իր դրսեւորումն է գտնում նաեւ մեր օրերում, անկախ նրանից՝ թիրախը կաթուղիկ, թե առաքելական հայերն են:

Ընդհանրապես Ուշմանայի եւ Թորիայի կաթուղիկ հայերին հեշտիացիներն ընդունում են որպես «մերոնքականների», ինչը նախ մշեցիների սերունդ լինելու հանգամանքով է պայմանավորված: Միավորող է նաեւ լեզվի գործունեությունը՝ Մշո բարբառը, որով նրանք տարբերվում են Կարնո բարբառով խոսող հայ կաթուղիկներից: Նինոծմինդայի կաթուղիկ հայերը միշտ գտնվում են Հայ Կաթուղիկ Պատրիարքարանի ուշադրության կենտրոնում, ինչի արդյունքում վերջինիս եւ համայնքի միջեւ հաստատվել են ամուր, արդյունավետ կապեր: Յեշտիայի, Թորիայի, Ուշմանայի գյուղերի բնակիչները հիմնականում արտագաղթում են Հայաստան, Ռուսաստան եւ այլ երկրներ՝ այդպիսով հիմք դնելով նորանոր հայ կաթուղիկ համայնքների առաջացմանը:

բ. Նինոծմինդայի «մշեցի-ֆրանգները» սովորաբար «գբո» են կոչում այն հայ կաթուղիկներին, որոնք կենցաղում թրքախոսներ են: «Գբո» անվանվող հայ կաթուղիկները հիմնականում բնակվում են Ախալքալաքի Բավրա, Խուլզունո, Կարտիկամ, Տուրցխ, Բոգդանովկայի Ասփարա, Նոր Խուլզունո գյուղերում: Վերը նշված գյուղերի բնակիչներն արդեն իսկ թրքախոս՝ Ջավախք են տեղափոխվել Արեւմտյան Հայաստանի Արդահան

գավառի Գեոլայի հասարակության Վել գյուղից (Վելից չգաղթած փոքրաթիվ հայ կաթոլիկ համայնքը տասնամյակներ անց իսպառ թուրքացավ ու իսլամացավ):

Ընդհանրապես թուրքերեն խոսելու սովորությունից ձերբազատվելու համար պահանջվեց երկար ժամանակ: Ջավախքում հաստատվելուց հետո էլ երեւոյթն առկա էր, քանի որ վելցիների գիտակցությունում դեռեւս կար թուրքական սպառնալիքի գործոնը, եւ փաստորեն օտար, այս պարագայում թուրքերեն լեզվի պահպանումը մի տեսակ պաշտպանական միջոց է եղել: Սեփական գոյությունը պահպանելու համար նույնիսկ փորձել են հրաժարվել հայ լինելուց, ասելով՝ «իթ օլուրըմ, էրմենի օլմամ» (շուն կլինեմ, հայ չեմ լինի): Բայց պետք է նկատել, որ թրքախոսությունն ավելի վառ արտահայտված էր մինչխորհրդային շրջանում. կրթական համակարգի բարելավման ու գրաճանաչության հետ մեկտեղ երեւոյթը զգալիորեն նահանջեց՝ աստիճանաբար կենցաղում ավելի տիրապետելի դարձնելով հայերենը: Եթե այսօր էլ վերոհիշյալ գյուղերում խոսում են թուրքերեն, ապա միայն տարեցները, իսկ երիտասարդների մեջ այդ սովորույթն այլեւս տիրապետող չէ:

Ներկայումս այս գյուղերը (մերառյալ Ալաստան եւ Վարեւան գյուղերը) սպասարկում է Ախալքալաքի եւ Նինոծմինդայի շրջանների հայ կաթոլիկների ժողովրդապետ, լեռն հոգեւորական, հայր Անդրե վրդ. Եանիցկին: Այստեղ նա հովվություն է անում շուրջ քսան տարի, նստավայրն է Տուրցխը: Պետք է նկատել, որ հայ կաթոլիկ սպասավորների խիստ պակասը լրացվում է օտարազգի հոգեւորականներով: Բացի հայր Անդրեից, Ջավախքում հոգեւոր գործունեություն են իրականացնում եւս երկու լեհեր՝ հայր Զովսեփ Կորնաշեւսկին, Թբիլիսիի եւ Ախալցխայի հայ կաթոլիկների (կենտրոնը՝ Օղալթբիլա) ժողովրդապետ, վարդապետ Անատոլ Իվանյուկը:

Գյուղատնտեսությամբ մի կերպ գոյատևող եւ եկամտի այլ աղբյուր չունեցող կաթոլիկ հուլզումո եւ Տուրցխ գյուղերին երբեմն օգնություն է ուղարկում Վատիկանը, այն էլ ալյուրի, շաքարի, ձեթի եւ առաջին անհրաժեշտության այլ ապրանքների տեսքով: Այսօր Ջավախքից հեռանում են եւ առաքելականները, եւ հայ կաթոլիկները. վերջիններս հատկապես մեկնում են Ռուսաստան, այս պատճառով գյուղերի մեծ մասը կիսով չափ դատարկվում է: Մասնավորապես Տուրցխում հայ կաթոլիկ 450 ընտանիքից մնացել է 230-ը, արտագաղթում է հատկապես երիտասարդությունը: Նույն կարգավիճակում են հուլզումոյի բնակիչները, որտեղից արտագաղթել է շուրջ 150 ընտանիք: Ստացվում է, որ ռուսաստանյան մի շարք քաղաքներում, հատկապես Սանկտ Պետերբուրգում եւ Մոսկ-

վայում, բավական լավ կազմակերպված հայ կաթոլիկ համայնքների համալրումն ու գոյատևումը որոշ չափով պայմանավորված է վերջիններիս ցավալի արտագաղթով:

գ. Այսօր «խաս-ֆրանգներ» անվանվում են Ալաստան եւ Վարեւան գյուղերի բնակիչները: Այս գյուղի բնակիչները գաղթել են 1828թ., վարեւանցիները Կարինի թոււանջ (ներկայումս Գյուլգելօվա), իսկ Ալաստանի բնակիչները նույն շրջանի Արծաթի (ներկայումս Յեշիլայլա), մասամբ էլ թոււանջ գյուղից: Հետաքրքիր է, որ 1950-ական թվականներին հանրապետական թուրքիայում վերոհիշյալ հայկական տեղանունները թուրքականով փոխարինելու ժամանակ սույն գյուղերի բնակիչների կողմից խիստ դժգոհություն է եղել: Ըստ մեր ունեցած տեղեկությունների՝ այս գյուղերի բնակիչների մի մասը, որը չէր գաղթել, ցեղասպանության տարիներին մահվան սպառնալիքի տակ հրաժարվել է կաթոլիկությունից եւ իսլամացել:

Իրենք՝ ալաստանցիները, «խաս», այսինքն՝ «մաքուր-ֆրանգ» լինելը բացատրում են նրանով, որ երբեւէ թրքախոս չեն եղել, ինչպես հարեւան Տուրքխ գյուղի բնակիչները: Ոմանք էլ այլ բացատրություն են տալիս՝ ասելով, որ իրենք միշտ հավատարիմ են մնացել Հայ Կաթողիկե եկեղեցու հայածես սովորությունին եւ միշտ մերժել են հռոմեածես արարողակարգերը: Այդ պատճառով էլ հարեւան գյուղերն իրենց կոչում են «խաս-ֆրանգներ»: Հայապահպանմանը նպաստող կարեւորագույն բաղադրիչները (կրթական, ծիսական) իրենց հետ այս գյուղ են բերել Մխիթարյան միաբանությունում կրթություն ստացած սաները: Այս պարագայում Հայ Կաթողիկե եկեղեցու գործառույթները, հոգեւորից բացի, եղել են նաեւ կրթական, ինչն այս գյուղերին որոշ առումով հեռու է պահել կաթոլիկ հայերով բնակեցված՝ վրացանալու ճանապարհ բռնած մի քանի հարեւան գյուղերի ճակատագրի կրկնությունից: Խոսքը Ասպինձայի շրջանի կաթոլիկ Վարգավ, Խզաբավրա եւ անբնակ Բնելա գյուղերի մասին է: Վերջիններիս բնակիչները բնիկ հայ կաթոլիկներ էին, որոնք 19-րդ դ. վերջին հիշատակվում էին որպես հայախոսներ, բայց վրացական սովորություններ ունեցող: Նրանց վերջնական վրացականացումը տեղի ունեցավ խորհրդային կարգերի հաստատման առաջին տարիներին, եւ արդի վրացական աղբյուրներում նրանք ներկայացվում են որպես վրաց կաթոլիկներ:

Կաթոլիկ հավատքին հավատարիմ մնալու վերաբերյալ ալաստանցիների բանավոր խոսքում պահպանվել է հետեւյալ գրույցը. «Եթե հայ կաթոլիկը անցնում է առաքելական եկեղեցու մոտով եւ այդ պահին ոտքը

փուլ է մտնում, ապա չպետք է կռանա, այլապես կհասկացվի, թե երկրպագում է հայոց ավանդական եկեղեցուն»։ Նույնատիպ ավանդագրույցներ տեղ են գտել նաև Արդահանից գաղթած, Բաթումում հաստատված հայ կաթոլիկների շրջանում։

Կարելի է պնդել, որ հարեւան առաքելական հայերին աղջիկ տալու հարցում բավականին «ժլատ» են եղել, ինչը գալիս է նաև նեղ համայնքային կյանքով ապրելու ավանդական սովորությունից. այն սկզբնապես սահմանափակվել է հավատակցի հետ ամուսնությամբ։ Ներքին ամուսնությունների ավանդույթը առաքելական հայերի միջավայրի գործոն էր, որը ազգապահպանման առումով բացառում էր օտարազգիների հետ ամուսնությունները։ Ավանդույթը հետագայում սահուն անցում կատարեց կաթոլիկություն ընդունած հայերի միջավայր՝ ավելի նեղացնելով, ձեւփոխելով դրա նախնական իմաստը, որն արտահայտվեց արդեն իսկ առաքելական հայերի հետ ամուսնության սահմանափակումով։

Իհարկե, մեր օրերում նման պատկերացումներն այլևս տեղ չունեն, դրանք իսպառ նահանջ ապրեցին խորհրդային շրջանում՝ դուրս մղելով համայնքային կյանքից կրոնական ավանդականությամբ ձեւավորված կարծրատիպերը։

Ցավով պետք է արձանագրել, որ Ալաստանի երբեմնի 3000-ի հասնող ազգաբնակչությունից այսօր հազիվ հինգ հարյուր շունչ կա, այն էլ տարեցներ։ Նրանց մեծ մասը հաստատվել է Հայաստանում դեռևս 1960-1970-ական թթ.։ Աստիճանաբար ինտեգրվելով հայ հասարակությանը՝ կաթոլիկ մկրտությունից զուրկ լինելու պատճառով նրանք ընդունել են նախնյաց հավատքը։ Ընդ որում՝ դա կատարվել է աստիճանաբար, գիտակցված եւ առանց որեւէ պարտադրանքի, երբեմն նաև նոր շրջապատում «Ֆրանգի» կերպարից եւ պիտակավորումից վերջնականապես ձերբազատվելու համար։ Նույնիսկ պատահում է, որ ընտանիքի անդամներից մի քանիսը առաքելական, իսկ մյուս մասը՝ կաթոլիկ են լինում, բայց դա էական նշանակություն չի ունենում միջընտանեկան հարաբերություններում։

Գյուղում այսօր գործում է Վերափոխման Ս. Աստվածածին կաթողիկե եկեղեցին՝ կառուցված 1856թ.։ Արտերկրում աշխատող գյուղի երիտասարդության եւ Վատիկանի հանգանակած գումարներով սկսվել են եկեղեցու վերանորոգման աշխատանքները։ Այդ աշխատանքներին հետևելու նպատակով 2008թ. հուլիսի 30-ին գյուղում անակնկալ այցելությունով ներկա է գտնվել Հայ Կաթողիկե եկեղեցու առաջնորդ Տեր Ներսես Պետրոս ԺԹ կաթողիկոս պատրիարքը։ Պատրիարքի Վրաստան այցելությունը պատմական բացառիկ իրադարձություն էր, քանի որ այս մակարդակի

հոգեւորականի այցելությունը հայ կաթոլիկների շրջանում տեղի էր ունենում առաջին անգամ: Նա շրջագայել է շուրջ տասնչորս հայկական կաթոլիկ գյուղերով՝ հընթացս ծանոթանալով տեղացիների այսօրվա խնդիրներին եւ հոգսերին:

«Խաս-ֆրանգներ»-ով բնակեցված հաջորդ գյուղը Վարեւանն է, որը նույնպես դատարկվելու եզրին է: Ժամանակին այս գյուղում ապրում էին միանգամից մի քանի էթնիկ խմբեր՝ հայ կաթոլիկներ, ուղղափառ վրացիներ, հույն ուղղափառներ եւ թուրք-մեսիտեթցիներ: 1944թ. թուրքերն աքսորվեցին, իսկ վրացիների մեծ մասը, սկսած 1947-ից, վերաբնակվեց կառավարության կողմից միայն իրենց արտոնված, Կուր գետի հովտում գտնվող, թուրք-մեսիտեթցիներից ազատված այգեվետ ու բարեբեր գյուղերում: Այսօր հայերի կողքին գյուղում ապրում են հազիվ մի քանի վրացի եւ երկու տուն վրացացած հույն բնակիչներ:

Չեւտեւություններ

❖ Ջավախքի հայ կաթոլիկների հոգեւոր վերածննդի համար նշանակալի ավանդ ունեցավ Չայ Կաթողիկե եկեղեցին, որն, անշուշտ, առաջին իսկ հնարավորության դեպքում սեփական հովանու տակ վերցրեց իր հետեւորդներին: Դրանով նաեւ հաստատեց իր հոգեւոր իշխանության տարածման աշխարհագրական սահմանները՝ միաժամանակ մասնակից դառնալով հայ կաթոլիկների ինչպես հոգեւոր-եկեղեցական, այնպես էլ հասարակական կյանքին: Սպասվում է, որ երկար ժամանակ յուրաքանչյուր գյուղական համայնք չի կարող ունենալ զոնե մեկ հոգեւորական, ինչը խիստ բացասաբար է ընդունվում հայերի կողմից: Քանի որ մարդկային սահմանափակ ռեսուրսներ ունեցող Չայ Կաթողիկեն չի կարողանում ապահովել համայնքներին հոգեւորականներով, իսկ գյուղերի երիտասարդները չեն ցանկանում վարել հոգեւոր կյանք, շատ անգամ այդ դերն իր վրա է վերցնում Վատիկանը, որն այլազգի հոգեւորականներ է գործուղում: Դա էլ առաջ է բերում հայկական եւ արեւմտյան ազդեցությունների գոտի:

❖ Թեւեւ խորհրդային շրջանի պարտադրված գաղափարախոսությունը աթեիստական էր, այդուհանդերձ, նկատում ենք, որ Ախալքալաքի եւ Նինոծմինդայի հայ կաթոլիկներն այդ շրջանում դեռեւս պահպանել էին, եթե կարելի է ասել, «կաթոլիկական ինքնություն»-ը: Այն խորապես արտահայտվեց ԽՍՀՄ փլուզումից հետո այստեղ ուղարկված կաթոլիկ հոգեւորականների հանդեպ ցուցաբերած վերաբերմունքով: Ավելի քան յոթանասուն տարի հոգեւորականությունից զուրկ տեղացիները եւ հատկապես

հաջորդ սերունդները, ովքեր կրոնից բավականին հեռու էին կանգնած, բացասաբար չվերաբերվեցին իրենց համար խորթ, օտարազգի քահանաներին: Մասնավորապես, Տուրցիտուն հայտնված հայր Անդրեի համար գյուղացիներն իրենց ուժերով կառուցել են բնակարան: Նույնպիսի վերաբերմունք կար եկեղեցիների նկատմամբ. թեև դրանք փակ էին կամ գործում էին այլ նպատակների համար, բայց բարեխղճորեն պահպանվում էին:

❖ Ցավոք, արտագաղթը նվազեցնում է համայնքի մարդկանց թվաքանակը, եւ դրա կասեցման համար ոչինչ չեն կարող անել ո՛չ Վատիկանը, ո՛չ էլ Հայ Կաթողիկե եկեղեցին: Դա Ջավախքի համար հանընդհանուր եւ ամենահրատապ խնդիրներից է, որն ունի խորքային պատճառներ: Սակայն բոլոր խնդիրներով հանդերձ՝ Ջավախքի հայ կաթոլիկ համայնքները բավական կենսունակ են: Այս բոլոր գյուղերը դեռ պահպանել են իրենց հայկական դիմագիծը՝ ի հաշիվ հայկական շրջապատի: Դրանում, անխոս, մեծ է եղել նաեւ Մխիթարյանների դերը, ովքեր ժամանակին իրենց հայեցի դաստիարակությամբ զերծ պահեցին նրանց օտար ազդեցություններից:

«ԴԵՐՍԻՄՈՒՄ ՄԻ ՇԱՐՔ ԳՅՈՒՂԵՐԻ, ՍՐԲԱՎԱՅՐԵՐԻ ԱՆՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԵՐԵՆ ԵՆ»

Դերսիմցի զազա երաժիշտ **Միքայել Ասլանը** շրջանի երաժշտական ժառանգության կրողներից ու շարունակողներից է: Նրա երգացանկում բավական մեծ թիվ են կազմում Դերսիմի հայկական մեղեդիները եւ երգերը: Ներկայիս Թուրքիայի տարբեր վայրերում ցաքուցրիվ պահպանված հայկական մշակութային շերտերի, այդ թվում եւ երգերի հավաքումն ու պահպանումը, անշուշտ, մեծ կարեւորություն ունեն: Այդ առումով, ինչպես համշենահայ Հիքմեթ Աքչիչեքի, այնպես էլ դերսիմցի Միքայել Ասլանի կատարած աշխատանքներն արժանի են հատուկ ուշադրության: Արդեն մի քանի տարի նա իր համախոհների հետ աշխատում է «Դերսիմի հայկական ժողովրդական երգերը» նախագծի վրա: Վերջերս քրդական «Թիրոժ» ամսագրում հրատարակվել էր հարցազրույց Միքայել Ասլանի հետ, որտեղ նա խոսում է ինչպես այդ նախագծի, այնպես էլ Դերսիմում հայկական ներկայության տարբեր դրսեւորումների մասին: Ստորել մասնակի կրճատումներով ներկայացնում ենք այդ հարցազրույցը:

Ռ. Մ.

Հարց – Խոսակցություններ կան դերսիմցիների լեզվում, մշակույթում, սովորույթներում հայկական տարրերի մասին, դա իրո՞ք այդպես է:

Պատ. – Մեզ մոտ, օրինակ, կա «Կաղան» բառը, որն արեւմտահայերենում նշանակում է Ամանոր (Կաղանդ): Հնարավոր է, որ մեր լեզվին (ինձա՝ զազայերենին - Ռ.Մ.) հենց արեւմտահայերենից է անցել: Այդ տոնը մեզ մոտ նշվում է այնպես, ինչպես հայերի մոտ: Երբեք չեմ մոռանում, որ պապս մորս հետ իր գրույցներում ասում էր. «Աղջիկս, դուք այդ կաղանդը տոնում եք, լավ է, սակայն գոնե ծոմը մի պահեք, ավր դա լրիվ հայկական է»: Կաղանդին երեխաները տները շրջելով շաքար են հավաքում, եւ այնուհետեւ սկսվում է երեքօրյա ծոմ: Կա նաեւ «մեղաղ-մատաղ» բառը: Մենք մատաղ ենք ասում այն ճաշին, որը տրվում է մարդու մահից երեք օր հետո: Վերոնշյալների նման հայկական տասնյակ մշակութային հասկացություններ, բառեր են անցել մեր լեզվին, մեր մշակույթին: Իհարկե, այս

ամենը տեղիք է տալիս մտորումների, թե ինչպես է այդ ազդեցությունը եղել: Այս պարզ օրինակներից էլ երեւում է, որ հայերի եւ մեր (*զազաների – Ռ.Մ.*) միջեւ առկա է զգալի մշակութային փոխազդեցություն: Ես 2000թ. գմացի Երեւան եւ նման ընդհանրությունների այնտեղ էլ շատ հանդիպեցի: Երեւանում, մարդկանց հետ զրուցելիս, լսեցի բազմաթիվ բառեր, տեսա սովորույթներ, որոնք մենք էլ ենք գործածում: Այցելեցի Արեւելագիտության ինստիտուտ, այնտեղ հետաքրքրվեցի մարդկանց կարծիքներով Դերսիմի եւ դերսիմցիների վերաբերյալ: Նրանք Դերսիմի եւ դերսիմցիների հանդեպ մի ուրիշ հետաքրքրություն եւ սեր ունեին, որովհետեւ դժվար օրերին այդ մարդիկ իրենց աջակցել են:

Չայք – Որտեղի՞ց ծագեց «Դերսիմի հայկական ժողովրդական երգերը» նախագծի գաղափարը:

Պատ. – Մեզ մոտ՝ Դերսիմում, մի շարք գյուղերի, սրբավայրերի անունները հայերեն են: Օրինակ՝ Փիլվենք, Ախձունիք: Սրանք ինձ շատ հետաքրքրեցին: Ժամանակի ընթացքում հանդիպեցի նաեւ հայկական ծագմամբ դերսիմցիների: Բացի այդ, զգալի թվով դերսիմցի հայեր արտագաղթել եւ բնակություն են հաստատել Գերմանիայում ու դեռեւս տիրապետում են հայերենին եւ հայոց մշակութին: Այս ամենը զարգացրեց Դերսիմի հայկական ժողովրդական երգերը հավաքելու միտքը: Այս ուղղությամբ սկսեցինք հետազոտություններ անել, գրքեր մշակել: Այդ միջոցով գտանք շուրջ 60 մեղեդի: Այնուհետեւ Դերսիմից (նկատի ունեմ ոչ միայն ներկայիս Թունջելին, այլեւ այն վայրերը, որտեղ հիմնականում բնակվում են ալեւիները, քրզլբաշները) եւ մերձակա վայրերից մոտ 60 երգ էլ գտանք: Այսպիսով մեր գտած հայկական երգերի թիվը անցավ 120-ը: Մեր այս աշխատանքները շարունակվում են շուրջ երեք տարի: Անատոլիայում արեւմտյան երաժշտությունն առաջինը սովորած, առաջինը մեղեդիները, երգերը հավաքած, նոտագրած երաժիշտները հայեր էին: Օրինակ, Կոմիտասը, որը հայ երաժշտության ամենամեծ վարպետներից է: Ես նույնիսկ ուզում եմ հետեւյալ պնդումն անել. անատոլիական երաժշտություն կոչված երաժշտության կեսը հունական եւ հայկական է: Եթե այս մասին չենք հիշատակում, ապա նշանակում է, որ այդ ժողովուրդների հանդեպ անարդար ենք վարվում:

Չայք – Դերսիմը եւ դերսիմցիներն այդ անարդարության մեջ իրենց բաժինն ունե՞ն:

Պատ.– Ցավալի է, սակայն ներկայումս դերսիմցիները եւ Դերսիմի մտավորականները՝ ներառյալ եւ ես, իրենց մի ժամանակվա հարեւանների (*հիմա՝ հայերի – Ռ.Մ.*) մասին շատ լուրջ տեղեկություն չունեն։ Շատ չեն հետաքրքրվում այդ վայրերով, լեզուներով, ինքնություններով, այդ ավերված եկեղեցիներով, լքված գերեզմաններով։ Մինչդեռ, այս ամենը կորած նշաններ են եւ սպասում են բացահայտման։ Դերսիմցիներից շատերը համաշխարհային խնդիրների մասին բազմաթիվ մտքեր են արտահայտում, խոսում, պատմում, սակայն երբ հարցնում ես. «Լավ, քո գյուղի անունը ինչո՞ւ է այսպես, ո՞ր լեզվով է», լռում է, այս թեմայի մասին, չգիտես ինչու, չի մտածել։ Դեռ խոսք է բացվում հայերից՝ նրանց միտքը գալիս են ոչ թե կոտորածները, տեղի ունեցած աղետները, այլ հայերի ոսկիները։ Շատ ամոթալի մի վիճակ է։ Դայ ժողովրդի նկատմամբ կատարվածների համար մենք էլ պետք է մեր խղճին հարցեր տանք։ Քուրդ ժողովուրդն էլ այս հարցում մեղսակից է։ Նրանց շրջանում դեռեւս չի քննարկվում Դամիդիե գնդերի կողմից կատարված դաժանությունները։ Այդ ավարառուները այսօրվա սերունդների պապերը չէի՞ն։ Այս սերունդը ե՞րբ պետք է իր պապերի ցեղասպան ավանդույթի հետ առերեսվի։ Դայկական կոտորածի ժամանակ մեր պահպանած լռության վերաբերյալ Սըլօ Քըզը (*ըստ երեւույթին՝ զազա աշուղ – Ռ.Մ.*) մի ողբ ունի, որտեղ ասում է. «Այս հայկական գաղթի հանդեպ լուռ եք մնում, մտածո՞ւմ եք արդյոք, որ վաղը ձեր վերջն էլ է նրանց նման լինելու»։ Այս մասին նա ասում էր դեռեւս 1938-ից առաջ¹։

Հարց– Ի՞նչ նպատակ ունի «Դերսիմի հայկական ժողովրդական երգեր» նախագիծը։

Պատ.– Մենք այս նախագիծը ցանկանում ենք կյանքի կոչել՝ մեր խիղճը մի քիչ հանգստացնելու, ինքներս մեզ հետ, թեկուզ մի փոքր, առերեսվելու համար։ Այս տարածքներում մեզ մնացած ժառանգության մեջ հայերի դերը մեծ է։ Պետությունը ինչքան էլ շրջանի գյուղերի անունները փոխի, միեւնույն է՝ մենք ներկայումս էլ այդ գյուղերը հին անուններով ենք կոչում, եւ այդ անունների մեծ մասը հայերեն է։ Մենք վկան ենք այս հիշողության. նրանց գյուղերի, համատեղ գործածած սրբավայրերի, ավերված եկեղեցիների պատերի, գերեզմանաքարերի եւ հիմա էլ երգերի վկան ենք։ Եվ այս վկայությունը պետք է ակնհայտ դարձնենք, բարձրաձայնենք։ Եթե մենք կարողանանք սա բարձրաձայնել, միգուցե ոմանք էլ նույնը կանեն Տրապիզոնում, Էրզրումում։

Հարց – Իսկ Դերսիմուն ընդհանրապես հայ չի՞ մնացել:

Պատ. – Ես կարծում եմ, որ դերսիմցի հայերի մի մասը մնացել է Դերսիմուն եւ ալեւիականություն ընդունել, որպեսզի փրկվի: Ալեւիականություն ընդունելու հարցում, իհարկե, նշանակություն է ունեցել նաեւ այն, որ հայերն իրենց ավելի մոտ էին զգում ալեւիներին, քան սուննիներին: Սակայն, միեւնույն է, ալեւիականությունն ընդունել են, որպեսզի կարողանան նրա մեջ իրենք իրենց թաքցնել:

*Թուրքերենից թարգմանեց
Ռուբեն Մելքոնյանը*

¹ 1938թ. Թուրքիայում պետության կողմից դաժանորեն ճնշվել է Դերսիմի ապստամբությունը, որի ժամանակ կոտորվել են բազմաթիվ դերսիմցիներ, այդ թվում եւ Հայոց ցեղասպանության ժամանակ այնտեղ ապաստանած հայեր, շատերն աքսորվել են, ենթարկվել դաժան կտտանքների: Որոշ շրջանակներ այդ դեպքերը որակում են որպես Դերսիմի ցեղասպանություն:

ԻՍԼԱՄԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐ ԱՂՐԲԵՋԱՆՈՒՄ

Արաբս Փաշայան

Վերջին շրջանում իսլամը ձեռք է բերել էական նշանակություն Աղրբեջանի հասարակական գործընթացներում: Եթե խորհրդային եւ հետխորհրդային տարիներին իսլամական ինքնությունն Աղրբեջանում (որի մուսուլման բնակչության 2/3-ը շիա է, 1/3-ը՝ սուննի) առավելապես հիմնված էր մշակույթի եւ էթնիկության, քան կրոնի վրա, ապա կրոնականացվածությունն այլեւս բնորոշ է դարձել աղրբեջանական հասարակությանը: Ասվածի ապացույցն է գլխաշոր (հիջաբ) կրող աղջիկների եւ կանանց, իսլամական գործառույթ իրականացնող հավատացյալների, կրոնական կրթություն ստանալ ցանկացողների, իսլամական սրբատեղիներ մեկնել կամեցողների հարաճուն թիվը:

Հատկանշական է, որ երկրում որոշակիորեն հիմնավորվել է նաեւ կրոնական արմատականությունը, տարածում ստացել իսլամին վերաբերող տարաբնույթ (այդ թվում՝ քարոզչական) գրականությունը, կարեւոր նշանակություն է ձեռք բերել կրոնական հռետորականությունը:

Գիտակցելով աշխարհիկ ինստիտուտներին սպառնացող վտանգը՝ երկրի իշխանությունները մշտապես փորձել են թուլացնել կրոնի դերը հասարակական-քաղաքական կյանքում, ինչը դրսեւորվել է կրոնականացված տարրերի հետապնդումների եւ կրոնական խնդիրների նկատմամբ սահմանափակումների միջոցով: Օրինակ, վերջերս իշխանություններն արգելեցին մզկիթի բակում կամ հարակից տարածքում աղոթելը: Աղրբեջանում արգելված է գլխաշորով կրթական հաստատություններ մուտք գործելը (չնայած հասարակության մեջ գլխաշոր կրելն արգելված չէ), պաշտոնական փաստաթղթերի համար հիջաբով նկարվելը, որի հետեւանքով 16 տարին լրացած աղջիկներից շատերը չեն կարողանում անձնագիր ստանալ: Որոշակի ճնշումներ են իրականացվում այն մարդկանց նկատմամբ, որոնց արտաքին կերպարի մեջ կան ընդգծված կրոնական տարրեր, որոնցից է, օրինակ, երկար եւ անխնամ մորուքը (ինչը վկայում է սուննի իսլամի սալաֆիական կամ վահաբական կողմնորոշման մասին): Հայտնի են դեպքեր, երբ ոստիկանները ստիպել են մարդկանց սափրել մորուքը:

Նշենք, որ Աղրբեջանում շատ բարդ է կրոնական համայնքների եւ կազմակերպությունների գրանցման կարգը, որը ենթադրում է ստանալ

Կովկասի մուսուլմանների վարչության թույլտվությունը: Բավական խիստ է նաեւ կրոնական գրքերի գրաքննությունը: Համապատասխան մարմնի եզրակացության դեպքում արգելվում են այն գրքերը, որոնք սերմանում են դավանական անհանդուրժողականություն, ծայրահեղականություն եւ անջատողականություն:

Ադրբեջանական հասարակության մեջ իսլամի դերի ակտիվացումը, ըստ էության, պայմանավորված է մի շարք գործոններով, որոնցից են՝ խոսքի ազատության բացակայությունը, սոցիալական եւ տնտեսական խնդիրները, հիասթափությունն արեւմտյան արժեքների նկատմամբ եւ այլն: Երկրում առկա են քաղաքական եւ հոգեւոր ճգնաժամին բնորոշ տարրեր, երբ մարդիկ, փաստորեն, չեն վստահում ո՛չ իշխանություններին, ո՛չ ընդդիմությանը եւ ո՛չ էլ պաշտոնական իսլամի ներկայացուցիչներին:

Հատկանշական է, որ առկա իրավիճակում թե՛ սուննի, թե՛ շիա շրջանակներում տարածում է ստանում կրոնական արմատականությունը, որն իսլամի տեսանկյունից փորձում է մեկնաբանել սոցիալական եւ քաղաքական առկա խնդիրները եւ առաջարկել դրանց լուծումները՝ միեւնույն ժամանակ իր համար թիրախ դարձնելով հասարակական, քաղաքական եւ մշակութային այն գործիչներին, որոնք ունեն ընդգծված աշխարհիկ տեսակետներ կամ դեմ են արտահայտվում իսլամին առնչվող որեւէ իրողության: Նրանց նկատմամբ նույնիսկ հրապարակվում են մահվան դատավճիռներ, հնչեցվում են ջիհադի կոչեր:

Այս տեսանկյունից բավական աղմկահարույց էր 2007-ին Ադրբեջանում գրող-հրապարակախոս Ռաֆիկ Թադիի եւ «Սանաթ» թերթի խմբագիր Սամիր Սեդաղաթթոլուի դատավարությունը: Պատճառը նույնանուն թերթում Ռ.Թադիի հրատարակած «Եվրոպան եւ մենք» հոդվածն էր, որտեղ հեղինակը խոսել էր իսլամական արժեքների նկատմամբ քրիստոնեական արժեքների գերակայության մասին, ինչը կրոնականացված շրջանակներն ընկալել էին որպես անարգանք իսլամին եւ նրա սրբություններին: Հոդվածի դեմ արտահայտվել էր նաեւ Փաշազադեն, իսկ շիական Նարդարան գյուղում նոյեմբերի 10-ին տեղի ունեցած միտինգի ժամանակ Ռ.Թադիի դեմ հասարակական մահապատժի որոշում էր ընդունվել: Ռ.Թադիի եւ Ս.Սեդաղաթթոլուի դատավարությանը մասնակցել էին կրոնական արմատականներ, որոնք այնուհետեւ պահանջել էին մահապատժի ենթարկել վերջիններիս: Հատկանշական է, որ հիշյալ դեպքը արձագանք գտավ նաեւ Իրանում. հայտնի այաթոլլա Մուհամմադ Ֆազիլ Լանքյարանին մահվան ֆեթվա հրապարակեց հոդվածագրի եւ խմբագրի համար, ինչն աղերսներ ունի Սալման Ռուշդիին առնչվող հայտնի դեպքի հետ:

Բաքվի Խաղաղության եւ ժողովրդավարության ինստիտուտի տնօրեն, քաղաքագետ Արիֆ Յունուսովի կարծիքով՝ իսլամն Ադրբեջանում ներկայումս զբաղեցնում է այն վակուումը, որը ժամանակին, մինչեւ 2005թ. խորհրդարանական ընտրությունները, զբաղեցնում էր արեւմտամետ ընդդիմությունը, որին իշխանությունները դուրս մղեցին քաղաքական դաշտից: Նման իրավիճակ ստեղծվեց նաեւ Ուզբեկստանում, որտեղ իշխանությունների կողմից դուրս մղված ընդդիմության տեղը զբաղեցրեց միջազգային իսլամական արմատական շարժումներից մեկը՝ «Հիզբ ութ-թահրիրը»: Ըստ Յունուսովի՝ Ադրբեջանում փաստորեն պայքար է ծավալվում միայն երկու գաղափարախոսությունների՝ հեյդարիզմի եւ իսլամիզմի միջեւ:

Իսլամիստական տրամադրությունների աճով աչքի են ընկնում հատկապես հյուսիսային շրջանները, որտեղ բնակվում են էթնոդավանական փոքրամասնություններ, ինչպես նաեւ Ապշերոնի թերակղզին, մասնավորապես Բաքվի որոշ հատվածներ եւ դրան հարակից բնակավայրեր, ինչպես, օրինակ, իրանամետ Նարդարանը:

Իսլամի արմատական ուղղություններից Ադրբեջանում ներկայումս բավական ժողովրդականություն է վայելում սուննի իսլամի սալաֆիական կամ վահաբական հոսանքը, չնայած այդ հոսանքի կողմնակիցներն իրենց վահաբի չեն անվանում, այլ՝ «Ճշմարիտ իսլամի» հետեւորդներ: Շարժումն Ադրբեջան է ներթափանցել մի քանի, այդ թվում՝ արաբական ճանապարհով, իսկ նրա հաջողություններից մեկը կապված է Բաքվի սալաֆիական կողմնորոշման «Աբու Բաքր» մզկիթի երիտասարդ իմամ, խարիզմատիկ գործիչ Չամեթ Սուլեյմանովի անվան հետ:

Հատկանշական է, որ 2008թ. իշխանությունները փակեցին «Աբու Բաքրը», պատճառաբանելով, որ օգոստոսին մզկիթի դեմ իրականացված ահաբեկչությունից հետո այն այլեւս անվտանգ չէ հավատացյալների համար: Առաջին իսկ հայացքից ակնհայտ է, որ իշխանություններին առավել մտահոգում է երկրում սալաֆիականության ընդլայնման փաստը:

Խնդիրն այն է, որ Ադրբեջանում գաղափարախոսական բացը փորձ է արվում լրացնել պաշտոնական իսլամից դուրս գործող մզկիթներում: Հայտնի է, որ ուրբաթ օրվա իմամի կրոնական քարոզից՝ *խուտբայից* հետո, նույն իմամի կողմից մզկիթում քննարկվում են նաեւ սոցիալ-քաղաքական հարցեր: Արդյունքում, խոսքի ազատության բացակայության պայմաններում՝ Ադրբեջանում առանձին մզկիթներ դառնում են յուրօրինակ քաղաքական ակումբներ:

Իսլամին առնչվող գործընթացներում Ադրբեջանի իշխանությունների համար բարդ խնդիր է ոչ միայն ներքին, այլեւ արտաքին մարտա-

հրավերներին դիմագրավելը: Լինելով հարեւան Իրանին, Թուրքիային եւ Ռուսաստանի կազմում գտնվող Դադստանին (որտեղ ամուր հիմքեր ունեն իսլամի ծայրահեղական ուղղությունները), նաեւ գտնվելով Մերձավոր Արեւելքի հարեւանության մեջ, Ադրբեջանը թիրախ է արտաքին իսլամական ազդեցության համար: Դեռեւս 1990-ականներից Ադրբեջան սկսեցին ներթափանցել կրոնական քարոզիչներ Իրանից, Թուրքիայից, արաբական երկրներից, ի հայտ եկան միջազգային իսլամական մի շարք արմատական շարժումների մասնաճյուղեր, որոնք տարբեր ժամանակներում իշխանությունների կողմից հիմնականում չեզոքացվեցին: Իշխանությունները կարողացան մեծ հարված հասցնել հատկապես իրանական ազդեցությանը:

Հատկանշական է, որ իսլամական հարցերում իշխանությունների կողմից ընդունելի է համարվում թուրքական սուննի իսլամը, քանզի վերջինս չեզոքացնում է իրանական եւ այլ ազդեցությունները եւ համարժեք է Ադրբեջանի աշխարհիկ պետության մոդելին: Ադրբեջանի իշխանությունները կրոնական հարցերում Թուրքիայի հետ ակտիվորեն համագործակցում են: Թուրքիան ֆինանսավորել է որոշ մզկիթների վերանորոգումը, մի շարք հոգեւորականներ վերապատրաստվել են Թուրքիայում, Ադրբեջանից շատերն ուսանել են Թուրքիայի իսլամական կրթական հաստատություններում: Ադրբեջանում գործում են նաեւ թուրքական ոչ պաշտոնական իսլամական շրջանակներ, որոնցից է Ֆեթուլլահ Գյուլենի շարժումը, մասնավորապես՝ «Նուրսու» խմբերը, որոնք 2007-ին Ալլահիշյուքյուր Փաշազադեի կողմից հայտարարվել են «ոչ ցանկալի»: Նուրսույականները բազմաթիվ համախոհներ ունեն նաեւ իշխանական շրջանակներում:

2006-ից, ինչպես նշում է Ա.Յունուսովը, միջազգային իսլամական գործոնը սկսեց մեծ դեր խաղալ Ադրբեջանում: Այստեղ սկսեցին բավական հիվանդագին ձեւով արձագանքել այն իրողություններին, որոնք կապված էին իսլամի կամ Արեւմուտք – Արեւելք հակասությունների հետ: Ադրբեջանում ձեւավորվեց հակաարեւմտյան եւ հակախորայելական հռետորականությունը, որին չէր խանգարում նույնիսկ այն փաստը, որ, օրինակ, նույն Իսրայելի հետ Ադրբեջանն ուներ ռազմավարական գործընկերություն:

2006-ին Ադրբեջանում կազմակերպվեցին բողոքի անմախաղեպ ակցիաներ ընդդեմ Մուհամմադ մարգարեի ծաղրանկարների: 2006թ. ձմռանը Նարդարանում անկախ Ադրբեջանի պատմության մեջ առաջին անգամ այրվեցին ԱՄՆ-ի, Իսրայելի, Դանիայի, նաեւ՝ Յայաստանի եւ Շվեյցարիայի դրոշները: Փետրվարի 11-ին «Ենի խաբար» քիչ հայտնի թերթը քրիստոնեական թեմաներով ծաղրանկարներ հրապարակեց, իսկ

2006-ի ապրիլին հրեական կազմակերպությունները սպառնալից նամակներ ստացան տեղական իսլամիստներից:

2006թ. ամռանը բողոքի ակցիաներ կազմակերպվեցին ընդդեմ Լիբանանում «Հիզբալլահի» դեմ իսրայելական պատերազմի, իսկ 2008թ. դեկտեմբերին՝ Ղազախում սկսված իսրայելա-պաղեստինյան պատերազմի: Ի դեպ, հակաքրիստոնեական բովանդակություն ունեցող հակաարեւմտյան հռետորականության միջոցով են նաեւ արտահայտվում հակահայկական տրամադրություններ:

Ադրբեջանի Միլլի մեջլիսի պատգամավոր Էլմիրա Ախունդովայի կարծիքով՝ հասարակության հարաճուն արմատականացումը, որը տեղական միջավայրում ստանում է յուրօրինակ ձեւեր, մտահոգության եւ տագնապի առիթ է ստեղծում, որի դեմ իշխանությունները պետք է անհետաձգելի քայլեր ձեռնարկեն: Սակայն որքան էլ իշխանությունները փորձեն լուծել խնդիրները, միեւնույն է՝ քաղաքական միաբեւեռ համակարգի խորացումն ու առկա սոցիալական խնդիրները, գաղափարախոսական վակուումի պայմաններում, անխուսափելիորեն հանգեցնելու են իսլամի նշանակության աճին:

Փաստորեն, Ադրբեջանում մի կողմից՝ մեծանում է իսլամի ազդեցությունը հասարակական գիտակցության մեջ, մյուս կողմից՝ մեծանում է միջազգային իսլամական գործոնի ազդեցությունն Ադրբեջանի հասարակական գործընթացներում:

ՆԱԽԻՋԵՎԱՆ. ԹՈՒՐՔ-ԱՂԻՐԵՋԱՆԱԿԱՆ ՀԱԿԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ Կարեն Վերանյան

Վերջին շրջանում Հարավային Կովկասում մի շարք առանցքային հիմնահարցերի շուրջ ընթացող զարգացումները հետին պլան են մղել տարածաշրջանի ոչ պակաս կարևոր այնպիսի խնդիրներ, որոնց շարքին պետք է դասել Նախիջևեանի ինքնավարությունում ընթացող զարգացումները եւ դրանցում արտաքին ուժերի, առաջին հերթին՝ Թուրքիայի ներգրավվածության հարցերը: Փաստերը ցույց են տալիս, որ հատկապես վերջին տասնամյակում Թուրքիան կարողացել է ապահովել քաղաքական ու տնտեսական զգալի ներկայություն Նախիջևեանի ինքնավարությունում, ինչը պետք է որ լրջորեն մտահոգի Բաքվի իշխանություններին: Ինքնավարությունում թուրքական գործոնի ակտիվացման հարցում Ադրբեջանի կենտրոնական իշխանությունների զուսպ կեցվածքը, թերեւս, պայմանավորված է Թուրքիայի հետ եղբայրական հարաբերությունները չխախտելու եւ խնդրի շուրջ թուրք-ադրբեջանական հակասությունները չչահարկելու տրամաբանությամբ: Նախիջևեանի շուրջ Ադրբեջանի ու Թուրքիայի միջեւ առկա տարածայնությունները, որոնք, ըստ էության, կրում են սկզբունքային բնույթ, կարելի է դասակարգել մի քանի հիմնական ուղղությունների:

Ժողովրդագրական խնդիրներ

Չունենալով ցամաքային սահման Ադրբեջանի Հանրապետության հետ՝ Նախիջևեանը հայտնվել է սոցիալ-տնտեսական անմխիթար վիճակում, ինչի հետեւանքով տեղի բնակչության մի զգալի հատված գերադասում է արտագաղթել: Ոչ պաշտոնական տվյալների համաձայն, սոցիալական անբարենպաստ պայմանների, համատարած գործազրկության հետեւանքով ինքնավարության բնակչության թվաքանակն էապես կրճատվել է: 1999թ. բնակչության վերջին մարդահամարի տվյալների համաձայն, ինքնավարությունում բնակվում էր շուրջ 370 հազար մարդ, իսկ ներկայում այդ թվաքանակը չի գերազանցում 150 հազարը:

Խնդիրը Ադրբեջանի կենտրոնական իշխանությունների համար ավելի մտահոգիչ է դառնում, երբ առաջ է գալիս մեկ այլ օրակարգային խնդիր՝

ինքնավարության ժողովրդագրության վերափոխման միտումը: Վերջին շրջանում նկատելի է Թուրքիայի արեւելյան շրջանների բնակչության, որի ճնշող մեծամասնությունը քրդեր են, կանոնավոր ներհոսք Նախիջեւանի ինքնավարություն: Թուրքիայի՝ սոցիալ-տնտեսական բավական վատ վիճակում հայտնված արեւելյան շրջաններից գաղթած նորաբնակները համեմատաբար հեշտ են ինտեգրվում ինքնավարության սոցիալական պայմաններին ու հասարակական կյանքին: Ավելին, նրանց մի զգալի հատված կարողանում է կարճ ժամանակահատվածում նույնիսկ ձեռք բերել անշարժ գույք, ինչը դարձել է բավական կանոնավոր երեւույթ: Խնդրի առնչությամբ մտահոգություն են հայտնել նաեւ Ադրբեջանի փորձագետները, որոնք Նախիջեւանի ժողովրդագրության աստիճանական վերափոխման միտումը կապում են Թուրքիայի հատուկ քաղաքականության հետ, ինչի արդյունքում ոչ հեռու ապագայում Նախիջեւանը կհայտնվի քրդացման վտանգի շեմին:

Հիմնականում կենտրոնանալով ինքնավարության քրդացման երեւույթի վրա՝ մամուլում ընդհանրապես չի խոսվում Նախիջեւանի ինքնավարության այն բնակիչների վերաբերյալ, որոնք արտագաղթել են սահմանակից Թուրքիա եւ որպես կանոն հաստատվել Իգդիր ու Ստամբուլ քաղաքներում: Խնդիրն այն է, որ թուրքական կողմը լուրջ աշխատանքներ է ծավալում արտագաղթած ադրբեջանցիների հետ, փորձում օգտագործել նրանց ներկայությունը՝ ինքնավարությունում թուրքական գործոնի ակտիվացման ուղղությամբ: Պաշտոնական Անկարան մի կողմից աջակցում է նորաբնակ ադրբեջանցիների՝ համեմատաբար անխոչընդոտ ինտեգրմանը տեղի սոցիալական ու հասարակական կյանքին, մյուս կողմից՝ ամեն կերպ նպաստում է ինքնավարությունում մնացած իրենց ազգականների հետ շփումների պահպանման գործընթացին:

Կլանային պայքար

Նախիջեւանի ինքնավարության հետ ցամաքային սահմանի բացակայությունը հատկապես վերջին տասնամյակում զգալիորեն թուլացրել է Ադրբեջանի կենտրոնական իշխանությունների վերահսկողությունը ինքնավարության ներքին ու արտաքին գործընթացների վրա: Սակայն ոչ միայն. այսօր գրեթե չի խոսվում Նախիջեւանի ինքնավարության ղեկավարության՝ կենտրոնական իշխանությունների հետ ունեցած հակասությունների մասին: Անկլավային կարգավիճակում հայտնված ինքնավարությունում ստեղծված են գրեթե բոլոր պայմանները ավտորիտար կամ բռնատիրական կարգերի հաստատման համար, ինչի ականատեսն ենք

այսօր: Ինչպես նշում են ինքնավարության բնակիչները, ամենուրեք ոտնահարվում են մարդու իրավունքներն ու հիմնական ազատությունները, սակայն վերջիններս, տեղական ղեկավարության ճնշումների ներքո, որեւէ հնարավորություն չունեն այդ մասին բարձրաձայնելու: Քիչ չեն այն դեպքերը, երբ ինքնավարության տեղական ղեկավարության ընդդիմախոսները, որոնք անթաքույց հայտնել են իրենց վրդովմունքը ինքնավարությունում հաստատված բռնատիրության, անարդարության ու անպատժելիության մթնոլորտի վերաբերյալ, ձերբակալվել են՝ Հայաստանի օգտին կատարած լրտեսության մեղադրանքներով:

Ինքնավարության վերնախավի նկատմամբ Ադրբեջանի կենտրոնական իշխանությունների ազդեցության թուլացման արդյունքում խորացել են կենտրոնի ու շրջանի միջեւ առկա ներկլանային տարաձայնությունները: Հայտնի է, որ Ադրբեջանի կենտրոնական ղեկավարությունը՝ ի դեմս Ալիեւների ընտանիքի, նույնպես սերում է Նախիջեւանից եւ բավական լուրջ տարաձայնություններ ունի ինքնավարության իշխանական կլանի հետ: Վերջինիս նկատմամբ վերահսկողության ու ազդեցության պահպանման նպատակով Ադրբեջանի կենտրոնական իշխանությունները փորձել են ակտիվացնել ինքնավարության տեղական ղեկավարությանն ընդդիմադիր թելը, սակայն լուրջ հաջողությունների չեն հասել: Կենտրոնի հետ հարաբերությունների բարելավմանը զգալիորեն խոչընդոտում է նաեւ ինքնավարության տեղական վերնախավի մեջ ձեւավորված «անկլանային» կամ այսպես կոչված մեկուսացված գոյակցման հոգեբանությունը կամ բարդույթը:

Նախիջեւանի ղեկավարության ու Ադրբեջանի կենտրոնական իշխանությունների միջեւ առկա հակասությունները լավ առիթ են թուրքական կողմի համար՝ ինքնավարության ներքին խնդիրներում իր ներկայացվածության ընդլայնման համար: Վերջին տարիներին պաշտոնական Անկարան զգալիորեն ակտիվացրել է համագործակցությունն ինքնավարության ղեկավարության հետ, ինչի կապակցությամբ Ադրբեջանի կենտրոնական իշխանությունները քանիցս հայտնել են իրենց վրդովմունքը: Մյուս կողմից, սակայն, պաշտոնական Անկարայում բավական ջերմ են ընդունում ինքնավարության հակաիշխանական ներկայացուցիչներին ու շարքային քաղաքացիներին: Չպետք է մոռանալ, որ ինքնավարության վերնախավի ընդդիմախոսները երկրում տիրող կամայականությունների ու բարձիթողի վիճակի մասին իրենց դժգոհությունները հաճախ ստիպված են հայտնել թուրքական կողմի միջամտությամբ ու աջակցությամբ:

Տնտեսական գործոն

Նախիջեւանի ինքնավարության ու Թուրքիայի միջեւ համագործակցությանը զգալիորեն նպաստում է ինքնավարության սոցիալ-տնտեսական անմխիթար իրադրությունը: Ադրբեջանի հետ ցամաքային սահմանի բացակայությունը զգալիորեն դժվարացնում է կենտրոն-չրջան հաղորդակցությունն ու ապրանքափոխադրումները, որոնք հիմնականում իրականացվում են Իրանի տարածքով: Տեխնիկապես ու ֆինանսապես առավել շահավետ է ինքնավարության տնտեսական համագործակցությունը սահմանակից Թուրքիայի հետ, ինչը հանգեցրել է եւ այդ երկրից Նախիջեւանի տնտեսության կախվածությանը: Նախիջեւան առաքվող էլեկտրաէներգիայի մատակարարումների հիմնական մասն իրականացվում է Թուրքիայից, ոչ մեծ տոկոս էլ՝ հարեւան Իրանից:

Ինքնավարության ու Թուրքիայի միջեւ տնտեսական, ինչպես եւ քաղաքական հարաբերությունների խորացման հարցում կարելուր նախադրյալներից մեկն էլ սահմանակից Իրանի գործոնն է: Խնդիրն այն է, որ իրանական կողմը, հաշվի առնելով Իրանի ադրբեջանցիների գործոնը՝ բավական զգուշավորությամբ է մոտենում Նախիջեւանի ադրբեջանցիների ցանկացած ակտիվացմանը եւ տարածաշրջանում Նախիջեւանի ինքնավարության քաղաքական կամ տնտեսական կշռի մեծացմանը: Ուստի տրամաբանական է, որ իրանական կողմը, ըստ էության, ամենեւին էլ շահագրգռված չէ ինքնավարության տնտեսական զարգացմամբ: Փաստորեն, Ադրբեջանի հետ ցամաքային սահմանի բացակայությունը, Իրանի հետ, մեղմ ասած, ոչ այնքան բարիդրացիական հարաբերությունները եւ սահմանակից մյուս երկրի՝ Չայաստանի հետ հարաբերությունների խսպառ բացակայությունը Թուրքիայի հետ համագործակցությունը վեր են ածել այլընտրանքային շահավետ ուղու: Թուրքիան շարունակում է կարելուր դերակատարում ունենալ Նախիջեւանի ինքնավարության տնտեսության զարգացման գործում: Թուրքական կապիտալն այսօր հաստատուն դիրքեր է գրավել ինքնավարության տնտեսության այնպիսի ոլորտներում, ինչպիսիք են տրանսպորտը, սպասարկման ծառայությունները, շինարարությունն ու զբոսաշրջությունը:

Չեւտելություն

Նախիջեւանի հիմնահարցը Ադրբեջանի ու Թուրքիայի միջեւ շարունակվող եղբայրական հարաբերությունների թերեւս ամենահակասական կողմն է: Այսօր, կարելի է ասել, Նախիջեւանի ինքնավարությունը

շարունակում է մնալ «տեղեկատվական վակուումում», ինչը թույլ է տալիս թուրքական կողմին առավել ազատ գործել այս ուղղությամբ:

Վերջին շրջանում Նախիջեւանի ինքնավարության հետագա ճակատագրի շուրջ խոսակցությունները վերստին ակտիվացել են, մասնավորապես՝ կապված հայ-թուրքական հարաբերությունների բարելավման գործընթացի հետ: Ադրբեջանի ղեկավարությունը հստակ գիտակցում է, որ հայ-թուրքական սահմանի հնարավոր վերաբացումը կխորացնի Ադրբեջանի Յանրապետության ու Նախիջեւանի ինքնավարության միջև գոյացած անջրպետը՝ էլ ավելի թուլացնելով կենտրոնական իշխանությունների վերահսկողությունն ու ներգրավվածությունը ինքնավարության ներքին զարգացումներին, ինչի արդյունքում կմեծանա թուրքական կողմի ազդեցությունը Նախիջեւանի ներքին ու արտաքին խնդիրներում:

ՏԱՐԱԾ ԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԷՆԵՐԳԵՏԻԿ ՉԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԻ ՇՈՒՐՋ ՍԵՒԱԿ ՍԱՐՈՒԽԱՆՅԱՆ

Այն, որ վերջին ժամանակաշրջանի հիմնական էներգետիկ զարգացումները սերտորեն կապված են մեր տարածաշրջանի հետ, վկայում են միանգամից երկու կարեւոր իրադարձություն: Ապրիլի 24-25-ին Բուլղարիայի մայրաքաղաք Սոֆիայում հրավիրված «Բնական գազը Եվրոպայի համար. հուսալիություն եւ գործընկերություն» գազաթափողովի հիմնական երկու թեմաները դարձան «Նաբուկկո» եւ «Հարավային հոսք» գազատարների նախագծերը: «Նաբուկկո» նաեւ մայիսի 8-ին Պրահայում ԵՄ «Հարավային միջանցք. նոր մետաքսյա ճանապարհ» գազաթափողովի հիմնական թեմաներից մեկն էր:

Սոֆիայի գազաթափողովը

«Բնական գազը Եվրոպայի համար. հուսալիություն եւ գործընկերություն» գազաթափողովը, որն անց էր կացվել Բուլղարիայի նախագահ Գ.Պիրվանովի հովանավորությամբ, դեռեւս կազմակերպման ընթացքում գաղափարական որոշակիություն էր ստացել. գազաթափողովի ընթացքում քննարկման հիմնական թեման պետք է լիներ Ռուսաստանից ԵՄ էներգետիկ կախվածության նվազումը: Սա ակնհայտ երեւում էր Բուլղարիայի նախագահի՝ գազաթափողովի կայքում զետեղված ողջույնի խոսքից, որտեղ նշվում էր բնական գազի ներկրման աղբյուրների դիվերսիֆիկացման մասին, առանց որի հնարավոր չէ ԵՄ կայուն զարգացումը: Բացի այդ, մարտ–ապրիլ ամիսների ընթացքում բուլղարառուսական հարաբերություններում նկատվեցին բացասական զարգացումներ՝ կապված, հիմնականում, «Հարավային հոսք» հեռանկարային գազատարի հետ: Բուլղարիայի խորհրդարանում մի շարք պատգամավորներ երկարատեւ եւ զգայուն քննարկումներ սկսեցին այն մասին, թե ռուսական կողմը գազատարի կառուցմամբ ցանկանում է «ձեռք գցել» Բուլղարիայի գազատրանսպորտային համակարգը: Նման քննարկումները պատահական լինել չէին կարող: Ամենայն հավանականությամբ, դրանք միտված էին քար նետելու Ռուսաստանի ուղղությամբ՝ դրական

տեղեկատվական եւ քարոզչական դաշտ ստեղծելով գալիք գազաթափողովում բնույթով հակառուսական «Նաբուկկո» նախագծի քննարկումների համար: Բացառված չէ, որ նման զարգացումները բուլղարական քաղաքականության մեջ պայմանավորված էին ԱՄՆ նախագահ Բ.Օբամայի եւ Բուլղարիայի ղեկավարության բանակցություններով, որոնցում քննարկվել են նաեւ էներգետիկ անվտանգության հարցեր:

Ռուսաստանի վարչապետ Վ.Պուտինի՝ Սոֆիայի գազաթափողովին չմասնակցելու որոշումը կարելի է բացատրել հենց այս գործընթացներով: Չսպասելով գազաթափողովին, ապրիլի 21-ին Ռուսաստանը հրապարակեց «Ռազմավարական մոտեցում էներգետիկայի ոլորտում միջազգային համագործակցության իրավական բազայի մասին» փաստաթուղթը, որը հակադրվում է եվրոպական մոտեցումներին, որոնց հիմքում ընկած է գազ արտահանող եւ գազ տարանցող երկրների իրավասությունների սահմանափակումը՝ ի շահ գազ սպառող պետությունների: Ռուսական կողմի փաստացի դեմարշը խոր ազդեցություն թողեց Սոֆիայի գազաթափողովի ողջ ընթացքի վրա, քանի որ այն անցավ գազ արտահանող հիմնական պետության բարձրաստիճան ղեկավարության բացակայության պայմաններում (գազաթափողովին Ռուսաստանը ներկայացնող էներգետիկայի նախարար Ս.Շմատկոյի կարճ ելույթը հիմնականում քննադատական էր):

Այս գործոնն իր հետքը թողեց ոչ միայն գազաթափողովի ընթացքի, այլ նաեւ արդյունքների վրա: Մոսկվայի կողմից բացասական եւ կոշտ գնահատականներ ստանալով՝ Բուլղարիայի նախագահ Գ.Պիրվանովն առաջարկեց գազաթափողովի հռչակագրում ամրագրել ոչ թե «Նաբուկկոյի», այլ «բուլղոցի նոր նախագծերի», այդ թվում նաեւ «Չարավային հոսքի», գերակա կարելությունը ԵՄ-ի համար: Բուլղարիայի նախագահն իր մամլո ասուլիսի ժամանակ ընդգծեց նաեւ, որ «Նաբուկկոն» այլընտրանք չէ «Չարավային հոսքին», եւ իր երկիրը փորձելու է կյանքի կոչել այս երկու նախագծերը միաժամանակ:

Միեւնույն ժամանակ, Սոֆիայի գազաթափողովը ի հայտ բերեց մի շարք այլ հակասություններ, որոնք առաջ են եկել էներգետիկայի ոլորտում միջազգային եւ տարածաշրջանային համագործակցության մակարդակներում: Առաջին հերթին աչքի է ընկնում Վրաստանի դիրքորոշումը, որը գազաթափողովին արտահայտեց երկրի վարչապետը: Պաշտոնական թբիլիսիի հիմնական առաջարկները կապված էին ոչ թե «Նաբուկկոյի», այլ «Սպիտակ հոսք» գազատարի կառուցման հետ, որը պետք է Կասպիցից Ադրբեջանի, Վրաստանի տարածքով եւ Սեւ ծովի

հատակով ձգվի դեպի Ուկրաինա եւ Եվրոպա: Վրաստանի մոտեցումները կարելի է ավելի քան տարօրինակ համարել ոչ թե նախագծի անիրատեսականության, այլ այն պատճառով, որ «Սպիտակ հոսքն» ուղղակիորեն հակասում է բուն «Նաբուկկո» նախագծին եւ Բաքու–Թբիլիսի–Էրզրում գազատարի ողջ իմաստին:

Չնայած Ադրբեջանի մասնակցությանը գազաթափողովին՝ Բաքվի իրական էներգետիկ շահերը եւ էներգետիկ քաղաքականությունը նույնպես կարելուք քննարկումների տեղիք են տալիս: Նախ՝ Բաքուն դեռեւս շարունակում է բանակցությունները Մոսկվայի հետ գազի արտահանման ողջ ծավալները Ռուսաստանին վաճառելու վերաբերյալ: Երկրորդ՝ «Նաբուկկո» գազատարը լինելու է Ադրբեջանից անկախ: Գազատարի կառուցման եւ սեփականատերերի մեջ ոչ մի ադրբեջանական ընկերություն ընդգրկված չէ, ի տարբերություն Բաքու–Ջեյհան եւ Բաքու–Էրզրում խողովակաշարերի: «Նաբուկկոն» թեւ Ադրբեջանի համար ձեռնտու նախագիծ է, սակայն եթե Բաքուն սկսի խաղալ ԵՄ-ի կողմից թելադրվող կանոններով, ապա կարող է կորցնել կարելուք քաղաքական լծակներ, որոնք ունեն էներգիա արտահանող պետությունները: Երրորդ՝ դեռեւս անհասկանալի է, թե հայ-թուրքական հարաբերությունների հաստատման գործընթացը ինչպես կազդի Բաքվի եւ Անկարայի հարաբերությունների վրա: Համաձայն բրիտանական հեղինակավոր «The Daily Telegraph»-ի մայիսի 7-ի «էներգետիկ անվտանգության հետ կապված մտահոգություններ հայ-թուրքական բանակցություններից» հոդվածի, Բաքուն կարող է հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման ֆոնին հայացքը դեպի Մոսկվա թեքել, ինչը կվտանգի «Նաբուկկոյի» ապագան:

Պրահայի գազաթափողովը

Պրահայում անցկացված «Հարավային միջանցք. նոր մետաքսյա ճանապարհ» գազաթափողովը Սոֆիայի գազաթափողովի ուղղակի շարունակությունը հանդիսացավ՝ նվիրված միայն մեկ նախագծի՝ «Նաբուկկոյին»: Գազաթափողովի կարելուք իրադարձություններից մեկը կարելի է համարել «Նաբուկկոյի» կառուցման մասին հռչակագրի ստորագրումը: Այն կարելուքում է գազատարի նշանակությունը եւ հռչակում, որ մինչեւ հունիսի վերջը պետք է ստորագրվի միջպետական համաձայնագիր գազատարի կառուցման վերաբերյալ: Սակայն ամենակարելուք նշանակությունն այս դեպքում ունի ոչ թե այն, որ ստորագրվել է հռչակագիր, այլ

այն, որ այդ հռչակագիրը ստորագրել են ընդամենը 4 պետություններ՝ Թուրքիան, Ադրբեջանը, Վրաստանը եւ Եգիպտոսը: Այն ստորագրելուց հրաժարվել են Թուրքմենստանը, Ուզբեկստանը եւ Ղազախստանը: Փաստորեն, Կենտրոնական Ասիայի երկրների եւ Իրանի գազը ստանալու համար ստեղծված «Նաբուկկո» նախագիծն իրականանում է առանց այս պետությունների մասնակցության: Իրան–Արեւմուտք հարաբերությունների՝ վերջին շրջանում սկսված կարգավորման նշույլները կարող են հանգեցնել նրան, որ Իրանը միանա նախագծին: Սակայն կարող է եւ այդպես չլինել: Ի վերջո, Իրանի էներգետիկ քաղաքականությունն արդեն 30 տարի հիմնված է ամբողջական ինքնիշխանության վրա, եւ խիստ կասկածելի է, թե Թեհրանը պատրաստ է խաղալ եվրոպական կանոններով ու սահմանափակել վերահսկողությունը սեփական էներգակիրների արտահանման վրա, ինչպես նաեւ հրաժարվել այն հսկայական քաղաքական շահաբաժիններից, որոնց տիրապետում են սեփական էներգակիրները լրիվ անկախ արտահանող պետությունները:

«Նաբուկկոյի» կառուցման մասին հռչակագրի ստորագրումը սկիզբն է այն գործընթացի, որը պետք է անցնել այս նախագծի իրականացման համար: Հայտնի կամ երաշխավորված չէ, որ այդ գործընթացը դրական ավարտ կունենա: Սակայն պետք է նշել մի շարք էական գործոններ, որոնք կարելի է նշանակություն ունեն հայաստանի համար: Դրանք են.

1. «Նաբուկկոյի» ներկայիս տարբերակը, համաձայն որի՝ գազատարի մի ճյուղը կառուցվելու է Թուրքիա–Իրան, իսկ մյուսը՝ Վրաստան–Ադրբեջան ուղղությամբ, Հայաստանի համար դրական չի կարող համարվել, քանի որ այն էներգետիկայի ոլորտում նոր բաժանարար գծերի գոյացման հիմք է ստեղծում:

2. Միեւնույն ժամանակ, գազատարի նախագիծը վերջնական չէ եւ կարող է փոխվել: Սա նշանակում է, որ Հայաստանը կարող է սկսել գործընթաց նախագծին մասնակցելու համար: Հայ-ադրբեջանական հակամարտության չկարգավորվածությունը չի նշանակում, թե Հայաստանն ինքնաբերաբար զրկվում է գազատարի կառուցմանը մաս դառնալու հեռանկարից: Կարելի է ներգրավել բոլոր այն ռեսուրսները, որոնք կարող են ստեղծվել հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման դեպքում, ինչպես նաեւ նրանք, որոնք կան Հայաստան–Իրան հարաբերություններում:

3. Գազատարի նախագծի հնարավոր իրականացումը հիմք է ստեղծելու տարածաշրջանային էներգետիկ համագործակցության

ակտիվացման համար եւ թեժացնելու է էներգետիկ ռեսուրսների համար մղվող պայքարը Հարավային Կովկասում, Կենտրոնական Ասիայում ու Մերձավոր Արեւելքում: Տվյալ պարագայում Հայաստանի համար կարեւոր է դառնում տարածաշրջանում էներգետիկ ակտիվների ձեռքբերման ուղղությամբ քայլեր ձեռնարկելը՝ իբրեւ ազգային մրցունակության ապահովման երաշխիք: Թուրքմենստանի, Ղազախստանի, Իրաքի եւ անգամ Իրանի էներգետիկ ոլորտները գնում են ազատականացման եւ այդպիսով բաց դառնում արտասահմանյան ներդրումների համար: Հայաստանի համար նման հնարավորություններից օգտվելու հեռանկարն անհրաժեշտ է չի թվում:

ԵՎՐՈՊԱՅԻ ՄՇՈՒՇՈՏ ԱՊԱԳԱՆ

Ա. Դավիդսոն – Մոսկվայի պետական համալսարանի պրոֆեսոր, պատմական գիտությունների դոկտոր, Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի ընդհանուր պատմության ինստիտուտի աֆրիկյան հետազոտությունների կենտրոնի ղեկավար:

Եվրոպայի պատմական հռետեսությունը

«Ասիան լուսավորեց Եվրոպան, ու Եվրոպան նվաճեց Ասիան: Այժմ Եվրոպան է լուսավորում Ասիան: Կերկնի⁶, արդյոք, Ասիան նույնը Եվրոպայի նկատմամբ», – ավելի քան 100 տարի առաջ, 1904թ. մայիսին այսպես է գրել պատմաբան Վասիլի Կյուչենսկին:

Դեռ կես դար ավելի վաղ Ալեքսանդր Գերցենը հավաստում էր, որ Եվրոպան «այլասերվել է»: «Ամեն ինչ արժեզրկվում եւ թոշնում է ուժասպառ հողի վրա. չկան տաղանդներ, չկան ստեղծողներ, չկա մտքի զորություն, չկա կամքի ուժ: Այս աշխարհն ապրել է իր փառքի դարաշրջանը. Շիլլերի ու Գյոթեի ժամանակն անցել է այնպես, ինչպես Ռաֆայելի եւ Միքելանջելոյի ժամանակը, ինչպես Վոլտերի եւ Ռուսոյի ժամանակը, ինչպես Միրաբոյի եւ Դանտոնի ժամանակը: Արդյունաբերության փայլուն դարաշրջանն անցնում է. այն ապրեցինք այնպես, ինչպես արիստոկրատիայի վեհաշուք ժամանակաշրջանը: Բոլորն աղքատանում են՝ չհարստացնելով ոչ ոքի»: Եվ ավարտում է. «Մնա՛ս բարով, հեռացյալ աշխարհ, մնա՛ս բարով, Եվրոպա»:

Հետո, ինչպես հայտնի է, Եվրոպայի մայրամուտն, իր կայսերական մեծությամբ հանդերձ, կանխատեսեցին շատերը: Օսվալդ Շպենգլերն իր սառնասիրտ վերլուծությամբ: Նրա հետեւություններին, ըստ էության, միացան ռուս փիլիսոփաներ Նիկոլայ Բերդյաեւը, Յակով Բուկչպանը, Ֆյոդոր Ստեպունը, Սեմյոն Ֆրանկը, ընդ որում՝ արտահայտելով անհուսալի կսկիծ: Նրանք Շպենգլերի «Եվրոպայի մայրամուտը» գրքին նվիրեցին հողվածների ժողովածու եւ նրան կոչեցին «խիզախ մարգարե»: Ստեպունն այսպես բնութագրեց Շպենգլերի աշխատանքը. «Նրա մարգարեության բովանդակությունը եվրոպական մշակույթի վախճանն է: Կանցնեն քիչ հարյուրամյակներ, ու երկրագնդի վրա չի մնա ոչ մի գերմանացի, անգլիացի եւ ֆրանսիացի, ինչպես Յուստինիանոսի ժամանակ չկար այլեւս ոչ մի հռոմեացի»:

Ստեպունը հատկապես առանձնացրեց Շպենգլերի հետեւյալ խոսքերը. «Մահանալով՝ անտիկ աշխարհը չէր իմանում, որ ինքը մահանում է, եւ, ուստի, ըմբռնվում էր հոգեվարքի յուրաքանչյուր օրը որպէս աստօծ պարգէւ: Սակայն մեր պարգէւը սեփական անխուսափելի ճակատագրի կանխատեսման պարգէւն է: Մենք կմեռնենք գիտակցորեն՝ մեր քայքայման ամեն փուլն ուղեկցելով փորձառու բժշկի սուր հայացքով»: Այս բոլոր կանխատեսումներն արվել են անցյալ եւ նախանցյալ դարերում: Սակայն նման գաղափարները բնորոշ են նաեւ մեր օրերին:

JaLOUSE միջազգային հանդեսում տրվել է կանխատեսում, թե ինչպիսին կլինի 21-րդ դարը: «Վրոպայի փառահեղ, հաղթական, կապիտալիստական պայծառափայլ կայսրությունների ժամանակաշրջանը, որոնք երեք դար հրի, սրի ու շոգեշարժիչների միջոցով կառավարեցին ողջ մոլորակը, ավարտվում է, ինչպէս երբեւէ ավարտվեց, «մութ դարերի» խավարի մեջ ծուլվեց մեծ Յոնի դարաշրջանը»: Եվ այնուհետեւ. «Ժամանակակից Արեւմուտքի ճակատագիրը բերում է տխուր համեմատություններ Յոնեական կայսրության ողբերգական անկման հետ...»:

Յեղիմակները պնդում են. «Չի անցնի եւ 50 տարի, երբ Բրեժնեւի, Նիքսոնի եւ Վիլի Բրանդտի ժամանակաշրջանը կհիշեն որպէս մարդկության կողմից կորսված դրախտ: Պարզապէս այն պատճառով, որ հիմքերը, որոնց վրա կանգնած էր մեր աշխարհը, այլեւս չեն լինի»: Ինչպիսի՞ն կլինի ապագան: Պատասխան. «Առանց Արեւմուտքի», «Առանց սպիտակամորթների», «Առանց պետության», «Առանց ժողովրդավարության», «Առանց հավասարության», «Առանց իմաստի»: Եվ «Առանց Ռուսաստանի»:

Տարբեր բնույթի ահ ու սարսափներին մարդկությունը կարծես թե վարժվել է: Եվ, այնուամենայնիվ, JaLOUSE-ի հողվածից դժվար է պարզապէս խույս տալ: Այդ համարը ստորագրվեց տպագրության 2001թ. օգոստոսի 30-ին, իսկ ընթերցողներն այն ստացան հենց չարաբաստիկ սեպտեմբերի 11-ին...

Ոչ սպիտակ ռասիզմ

Նոր հարյուրամյակի սկիզբը դրվեց նաեւ հրապարակավ ելույթով, որն ուշադրության արժանացավ աշխարհի շատ երկրներում:

«Մենք պետք է սպիտակամորթներից փոխհատուցում պահանջենք գաղութացման ու ցեղասպանության համար, որոնք նրանք կազմակերպել են մեր հողում», – 2001թ. ապրիլի 22-ին, Տրիպոլիում կայացած համաժողովում հայտարարեց լիբիական առաջնորդ Մուամար Քադաֆին: Նա Աֆրիկային կոչ արեց թոթափվել սպիտակ մարդկանց մշակութային

Ժառանգությունից: «Նրանց լեզուն եւ ավանդույթները չեն կարող արտահայտել մեր զգացմունքներն ու մտքերը, ուստի մենք պետք է խոսենք մեր նախնիների լեզվով»: Քաղաֆին հիշեցրեց Լիբիայի փորձը, որը 1960-ականների վերջին հասավ երկրից 20 հազարից ավելի սպիտակամորթների, հիմնականում՝ իտալացիների վտարմանը: Իր ելույթում Քաղաֆին նշեց, որ խոսում է ողջ ոչ սպիտակամորթ բնակչության, նվաստացյալների ու հալածյալների, Աֆրիկայի անունից:

Անշուշտ, մարդաբանների դասակարգմամբ, նա, որպես արաբ, պատկանում է նույն «սպիտակամորթ» ռասային, որին ինքը մեղադրում է: Ու եթե այլևս կանգնենք ռասաների հակադրման դիրքերում, ինչպես դա անում է Քաղաֆին, ապա հարկ կլինի հիշել, որ արաբական ստրկավաճառությունը ծագել է եվրոպականից անհամեմատ ավելի վաղ ու սեւ Աֆրիկային միլիոնավոր մարդկային կյանքեր է արժեցել:

Սակայն, այսպես թե այնպես, այս ճառը բորբոքեց, սաստկացրեց հակասպիտակ, հակաեվրոպական տրամադրությունները Երրորդ աշխարհում: Թեպետ, դրանք առանց այդ էլ իրենց մասին հիշեցրել ու հիշեցնում են: Մի շարք միջազգային համաժողովներում առաջադրում են պահանջներ, որպեսզի Եվրոպան վճարի հարյուրամյակների գաղութատիրության եւ ստրկավաճառության համար:

Ի՞նչ է, մի՞թե աֆրիկացիներին հեշտ է մոռանալ, թե ինչպես էին դարեր շարունակ ստրուկներով բեռնված նավերն ակոսում Ատլանտիկան, իսկ Ամերիկայի պլանտացիաներում մեռնում իրենց նախնիները:

Չինացիներին, արդյոք, հե՞շտ է մոռանալ, թե ինչպես էր կայսր Վիլհելմ 2-րդը 1900թ. գերմանական էքսպեդիցիոն կորպուսին ուղարկելով Չինաստան՝ բարի երթ մաղթում. «Չինայել: Գերի չվերցնել: Սպանեք, որքան կարող եք: Ինչպես հազար տարի առաջ, երբ հոները, Աթիլա արքայի գլխավորությամբ, փառքի արժանացան, ինչը լեգենդներում ու հեքիաթներում այժմ էլ սարսափ է առաջացնում, այնպես էլ «գերմանացի» բառը հաջորդ հազար տարում պետք է սարսափեցնի Չինաստանին: Մենք պետք է գործենք այնպես, որպեսզի չինացին այլևս երբեք չհանդգնի խեթ նայել գերմանացուն»:

Էլ ի՞նչ խոսենք Աֆրիկայի մասին: Այդ նույն կայսր Վիլհելմի հրամանով, գերմանական տիրապետության դեմ ապստամբած հերերո (Հարավարեւմտյան Աֆրիկա) ժողովրդին զնդացրային կրակի տակ քշեցին Կալահարի անապատ եւ տասնյակ հազարավոր մարդկանց քաղցի ու ծարավի միջոցով մատնեցին մահվան: Անգամ Գերմանիայի ռայխսկանցլեր Բյուլովը, վրդովվելով, կայսրին ասել է, որ դա չի համապատասխանում պատերազմի վարման օրենքներին: Վիլհելմ 2-րդն անխռով պատասխանել է.

«Աֆրիկայում պատերազմի վարման օրենքներին դա համապատասխանում է»:

Երրորդ աշխարհի ժողովուրդներն անարգված են ոչ միայն այս հրեշավոր հանցագործություններից, հայացքներից, որոնք սովորական են եվրոպացիների համար: Օրինակ, ոչ եվրոպացիներին վրդովեցնում է դպրոցական ու համալսարանական բոլոր դասագրքերում ներմուծված այնպիսի հասկացությունը, ինչպիսին է «աշխարհագրական մեծ հայտնագործություններ»-ը. «Այդ ինչո՞ւ եք դուք մեզ հայտնագործել: Մենք այստեղ ապրում էինք»:

Չակակչիո եվրոպոցենտրիզմին

Արժե՞, արդյոք, զարմանալ, որ եվրոպոցենտրիզմին որպես հակակչիո՝ ուժեղանում են արելեւացենտրիզմի, արաբացենտրիզմի, իսլամացենտրիզմի, աֆրոցենտրիզմի բազմապիսի ձեւերը: Անշուշտ, այս գաղափարներն ու տրամադրություններն այսօր չեն ծնվել: Դեռեւս 1923թ. աֆրոամերիկացի Մարկուս Չարվին՝ «Չեո, դեպի Աֆրիկա» շարժման հիմնադիրը, պնդում էր. «Երբ եվրոպան բնակեցրել էր մարդակերների ռասան, վայրենիների, բարբարոսների եւ հեթանոսների ռասան, Աֆրիկայում ապրում էր սեւամորթ մարդկանց կիրթ, արվեստին, գիտությանն ու գրականությանը հոյակապ տիրապետող ռասա»:

Այսօր աֆրիկյան շատ երկրների դպրոցներում եւ համալսարաններում պատմության ուսուցումը հիմնված է պատմաբան Շեյխ Անտա Դիոպի գրքերի վրա: Նա գտնում է, որ միջերկրածովյան անտիկ քաղաքակրթության հիմքը եղել է Եգիպտոսը, իսկ եգիպտական քաղաքակրթությունը ստեղծվել է աֆրիկացիների՝ սեւամորթ մարդկանց կողմից: Ապացույցներից են փարավոնների պատկերներով հին եգիպտական մետաղադրամները, որոնց դեմքին երեւում են նեգրոիդի գծեր:

Մեծ ժողովրդականություն են վայելում նաեւ Ֆրանց Ֆանոնի (ծնունդով Մարտինիկից, կես դար առաջ բնակություն է հաստատել Ալժիրում) գաղափարները: Նրա «Անեծքով խարանվածները» գիրքը դարձել է սեղանի ընթերցարան ոչ միայն Աֆրիկայի ու Արաբական Արելեւքի շատ երկրներում, այլեւ աֆրոամերիկացիների համար: Ֆանոնի մոտ «Անեծքով խարանվածները» այն երկրների բնակչությունն են, որոնք եղել են գաղութային ու կախյալ վիճակում:

Ֆանոնն առաջիններից էր, որ ներմուծեց «հակառասիստական ռասիզմ» արտահայտությունը: Նրա խոսքերով, «հակառասիստական ռասիզմը՝ որպես սեփական մորթը պաշտպանելու ձգտում եւ որպես

գաղութային կեղեքմանը գաղութացվածի պատասխան, ինքնին պայքարի հիմնավորումն է»:

Ֆրանց Ֆանոնը մերկացնում է «Եվրոպական մոդելները», «Եվրոպական ոգին», պաշտպանում արեւմտյան մշակույթի արժեքների դեմ ինքնաբուխ բողոքները: «Գաղութացման ստին գաղութացվածները պատասխանում են ստով: Շիտակությունը հնարավոր է սոսկ ցեղակիցների հետ, իսկ գաղութարարների հետ հարաբերություններում՝ ինքնամոփոփություն եւ գաղտնամտություն.. ճշմարիտն այն է, ինչն օգնում է տեղացիներին եւ կործանում օտարերկրացիներին.. Լավ է այն ամենը, ինչը վատ է նրանց համար»:

Գաղութարարի մշակութային արժեքների պարտադրմանը գաղութացվածը պատասխանում է դրանցից լիովին, անվերապահ հրաժարմամբ: «Կեղեքիչների լեզուն հանկարծ սկսում է այրել շուրթերը»: Վրա է հասնում «զավթիչների արժեքներից գլոբալ հրաժարումը»: Ու եթե անգամ խոսքը ժամանակակից գիտության ու տեխնիկայի մասին է, «մասնագետի ասածը միշտ ընդունվում է կանխակալությամբ»: Հաստատելով այդ՝ Ֆանոնը հայտարարում է, թե գաղութացվածների համար միանգամայն օրինաչափ է «ամենատարական, ամենակուպիտ, ամենաբազմակողմանի ազգայնականությունը»: Ամբողջ վերն ասվածը գրվել է այն ժամանակ Ալժիրում ընթացող արյունահեղ պատերազմի տպավորության տակ: Սակայն Ֆանոնի շատ պնդումներ այժմ էլ են կրկնվում:

Եվրատյացության կայացման գործում ոչ քիչ դեր խաղաց Լուիս Ֆարախանը, որն իրեն հայտարարեց աֆրոամերիկյան բնակչության առաջնորդ: Նա ռասիզմի մեջ մեղադրեց բոլոր սպիտակամորթներին, այդ թվում նաեւ ԱՄՆ նախագահ Աբրահամ Լինքոլնին, որը պայքարում էր ստրկության վերացման համար: Ֆարախանի կողմից ստեղծված սեւամորթ մուսուլմանների «Իսլամի ազգ» շարժումն Ամերիկայի բնակչությանը բաժանեց ստրկատերերի հետնորդների եւ ստրուկների հետնորդների: Դրան համապատասխան, Ֆարախանը հայտարարեց, թե Միացյալ Նահանգները հարկավոր է մասնատել երկու պետության, եւ թող ստրկատերերի հետնորդների պետությունն օգնի ստրուկների հետնորդների պետությանը, մինչեւ նա ոտքի կանգնի: Լուիս Ֆարախանի քաղաքական Մուսուլմանական ծրագրում ասված է, որ սեւամորթների ու սպիտակամորթների խառն ամուսնությունները պետք է արգելվեն, սեւամորթ երեխաներին կարող են ուսուցանել միայն սեւամորթ ուսուցիչները, իսկ ինտեգրման գաղափարը երեսպաշտություն է:

Ինչպես հայտնի է, շատ աֆրոամերիկացիներ իրենց անունը փոխում են աֆրիկյանի եւ ասիականի: Բռնցքամարտիկ Կասիուս Քլեյը դարձավ

Մոհամեդ Ալի: Ֆիլադելֆիայի Թենիսյան համալսարանի աֆրոամերիկյան հետազոտությունների պրոֆեսոր, նորընծա անվամբ Մոլեֆի Քեթե Ասանտեն դարձավ աֆրոցենտրիզմի գլխավոր գաղափարախոսը: Նրա «Աֆրոցենտրիզմ» գիրքն արդեն անթիվ անգամ վերահրատարակվել է: Իր ընթերցողներին նա խորհուրդ է տալիս. «Եթե եվրոպացիները ձեզ որպես լավագույն գրող ներկայացնում են Շեքսպիրին, իսկ որպես լավագույն կոմպոզիտորներ՝ Բախին, Բեթհովենին, Մոցարտին, դուք պետք է անմիջապես հակադարձեք՝ տալով աֆրիկացի գրողների ու կոմպոզիտորների անուններ»: 2007թ. Ասանտեն լույս ընծայեց «Աֆրիկայի պատմություն» ծավալուն աշխատությունը, որտեղ մերժվում է Եվրոպայի որեւէ վաստակ:

Դերերի փոփոխություն

Ֆրանց Ֆանոնի «Անեծքով խարանձաձերը» գրքի նախաբանում ժան-Պոլ Սարտրը գրել է. «Եվրոպացիներ, բացե՛ք գիրքը, խորամուխ եղե՛ք: Մի քանի քայլ անելով գիշերային խավարում՝ դուք կելնեք խարույկի մոտ, որի շուրջ խնքվել են ձեզ անծանոթ մարդիկ: Մոտեցեք նրանց, ականջ դրեք նրանց խոսակցությանը: Նրանք խոսում են այն մասին, թե ինչ պիտի անեն ձեր գրասենյակների, դրանք պահպանող վարձկանների հետ... Նրանց լուսավորում եւ ջերմացնում է կրակը, բայց դա ձեր կրակը չէ: Դուք գտնվում եք նրանցից պատկառելի հեռավորության վրա... նայում եք շուրջը, դողում ցրտից: Դերերի փոփոխություն է»:

Չես ուզում հավատալ նման կանխատեսմանը: Սակայն ոչ-Եվրոպայի դերը շատ արագ աճում է՝ տնտեսապես, քաղաքականապես, մշակութային եւ, հատկապես, ժողովրդագրորեն: Նրանք, որոնց ընդունված է անվանել «սպիտակներ», այլևս կազմում են մարդկության 1/6 մասից էլ պակաս: Հենց միայն բուն Եվրոպայում արդեն իսկ Ասիայից ու Աֆրիկայից միլիոնավոր եկվորներ կան: Միացյալ Նահանգներում՝ Լատինական Ամերիկայից:

Միատարր եվրոպական պետությունների դարաշրջանն ավարտվում է: Կարելի՞ է այդպիսին համարել Ֆրանսիան, եթե այնտեղ արդեն գրեթե յոթ միլիոն մուսուլման կա՝ ասիացիներ եւ աֆրիկացիներ:

Պետք է միմյանց հետ խաղաղ գոյակցել, խուսափել միջոցառման կոնֆլիկտներից կամ, գոնե, մեղմացնել դրանք, նվազեցնել դրանց քանակը, դարձնել առավել քիչ վտանգավոր բոլորի համար, ավելի պակաս ողբերգական: Բայց ինչպե՞ս: Արդեն չափազանց արագ են այդ գործընթացներն ընթանում աշխարհում: Այնպես արագ, որ թե՛ գիտնա-

կաններին, թե՛ քաղաքական գործիչներին դժվար է հասնել նրանց հետեւից, ըմբռնել դրանք:

Եւքը երկխոսությունն է, փոխըմբռնումը: Սակայն դրա համար անհրաժեշտ է ճանաչել միմյանց, իմանալ փոխադարձ նախապաշարունների արձատները, հասկանալ ու հարգել նաեւ ուրիշի ճշմարտությունը: Բայց մե՞ծ են, արդյոք, Եվրոպայում ոչ-Եվրոպայի մասին գիտելիքները: Արդյոք չափազանց շա՞տ չէ կրթության եվրոպական համակարգը կենտրոնացված սեփական պատմության, սեփական մշակույթի վրա: Տարվո՞ւմ է, արդյոք, պայքար սեփական ռասայական նախապաշարունների դեմ:

Եթե դա չլինի, չի հաղթահարվի եւ «հակառասիստական ռասիզմը»:

Այո, Եվրոպայի համար դժվար ժամանակներ են եկել: Բայց նրանք երբեւէ եղե՞լ են դյուրին ու հասարակ: Ուզում ես հավատալ, որ նա իր արժանի տեղը կգտնի այս հոգետանջ աշխարհում: Չէ՞ որ Գերցենի հռեռեսական մարգարեությունն, այնուամենայնիվ, չիրականացավ, թեւ այդ ժամանակներից արդեն անցել է ավելի քան 150 տարի:

«Россия в глобальной политике»

թիվ 2, 2009

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ՊԱՏԵՐԱԶՄԻ ԿՆՃԻՈԸ	1
Գազիկ Տեր-Հարությունյան ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ	2
Արեստակես Սիմավորյան ԱԽԱԼՔԱԼԱՔԻ ԵՎ ՆԻՆՈԾ ՄԻՆԴԱՅԻ ՀԱՅ ԿԱԹՈՒԼԻԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ	7
Միքայել Ասլան «ԴԵՐՍԻՄՈՒՄ ՄԻ ՇԱՐՔ ԳՅՈՒՂԵՐԻ, ՍՐԲԱՎԱՅՐԵՐԻ ԱՆՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԵՐԵՆ ԵՆ».....	15
Արաքս Փաշայան ԻՍԼԱՄԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐ ԱԴՐԲԵՋԱՆՈՒՄ	19
Կարեն Վերանյան ՆԱԽԻՋԵՎԱՆ. ԹՈՒՐԲ-ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ ՀԱԿԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ 24	
Սեւակ Սարուխանյան ՏԱՐԱԾ ԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԻ ՇՈՒՐՋ	29
Ա. Դավիդսոն ԵՎՐՈՊԱՅԻ ՄՇՈՒՇՈՏ ԱՊԱԳԱՆ	34

Շապիկին պատկերված է
տեսարան **Բասենից**
(**Կապույտ բերդի** ավերակները)

«ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ», Հայաստանի
Հանրապետական կուսակցության հրատարակություն
Խմբագրական խորհուրդ
Երեւան, 375010, Սելիք-Աղամյան 2: Հեռ. 58 04 91, 58 04 83:
Էլ. փոստ՝ hanrapetakan@hkh.am:
Հիմնադիր՝ Հայաստանի Հանրապետական կուսակցություն:

Թուղթը՝ օֆսեթ, ֆորմատը՝ 70×108 1/16:
Պայմանական 3,25 մամուլ: Տպաքանակը՝ 1000:
Տառատեսակը՝ «Arial Armenian» եւ «Vs Helvetica»:
Վկայական՝ Օ1Մ 000176:
Տպագրվել է «Ամարաս» տպարանում: